

ԿՌՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Դ. ՏԱՐԻ. 1863. ԹԻՒ Բ.

Փ Ե Տ Ր Ո Ւ Ա Ր

Ա.ՂԲԻՒՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԴԻ ՍԱՐԳԻՍ ԳԻԼԱՆԷՆՑԻ

ՋՈՂԱՑԵՑԻՈՑ ԲԱՐԲԱՌՈՎ ԳՐԱՅ

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ձեռագիրը, որն որ այժմ մենք տպում ենք՝ հաղորդեց
մեզ պատուարժան աստիճանաւոր Յովհաննէս Ալաբերդեանցը,
հանգուցեալ Գէորգ Ալաբերդեանցի եղբայրը : Էստուր համար
մենք քաղցր պարտականութիւն ենք համարում շնորհակալուի
անել Նրան հրապարակաւ, ուրիշները շատ քիչ են հետևում.

նրա օրինակին, նրանք էնպէս պահում են էղպիտի ձեռագիրները, հէնց կարծես՝ մէկ արդեւած բան ընի: Գէորգ Ալաւերդեանցը, ինչպէս մենք լսել ենք, վեր է առել էդ ձեռագիրը հանդուցեալ իշխան Յովհաննէս Զաքարեան Արղութեանցի, որն որ երեւելի Ռուսաց զօրապետ իշխան Մովսէս Զաքարեան Արղութեանցի եղբայրն էր: Իշխան Յովհաննէս Արղութեանցին հասել է էդ ձեռագիրը Յովսէփ կաթողիկոսից, որն որ Յովհաննէս Արղութեանցի հօր Զաքարի հօրեղբօր որդին էր և յառաջ քան կաթողիկոս ընտրվիլը, Ռուսաստան բնակվող և Աշտարխան բնակվող Հայերի արքեպիսկոպոս էր: Էս ձեռագրի առաջին հատուածը գրել է Զուլայեցուց բարբառով Պետրոս զի Սարգիս Գիլանէնցը Մինաս արքեպիսկոպոսի համար, որն որ ինչպէս անհուճակնք մէկ Ռուսաց զրքից, որ պարունակում է զանազան նիւթեր Հայոց պատմութեան համար, տասն և եօթներորդ դարու սկզբումն Ռուսաստան բնակվող Հայերի արքեպիսկոպոսն էր¹: Յովսէփ կաթողիկոսին երեւի էս ձեռագիրը հասել է Մինաս արքեպիսկոպոսից:

Բանից երեւում է, որ էս ձեռագիրը բուն զի Սարգիս Գիլանէնցի գրած է, միայն նրա օրինակն է: Լաւ կընէր խի ձեռագիրը գտնել: Էս ձեռագիրը ունի հարիւր երեսուն ու երեք յօդուած և քառասուն ու երեք երես: Նա բովանդակում է էն անցքերը, որն որ պատահել են Պարսկաստանումը 1723 թուին, նրանից երեւում է, ինչպէս Մահմուդ խանը Ափղանեցուց օգնականութիւնով եկաւ Հոսէյին շահի վրայ ու նրա աթոռը խեց: Պարսկաստանի Հայոց պատմութեան մասին շատ թանկագին տեղեկութիւններ է հաղորդում էս ձեռագիրը, նրանից անհուճակնք, ինչ փափաղով սպասում էին Հայերը Ռուսներին և ինչպէս աշխատում էր Հայոց կաթողիկոսը Ռուսաց մօտին: Յայտնի է, որ Ռուսաց կայսրը՝ Մեծն Պետրոսը 1722 թուին երեսուն հազար զօրքով եկաւ Պարսկաստան և զղում էր Շահ Հոսէյինի օրդուն Ռամսսոյին իր հօր աթոռի վրայ նստեցնել: Կարելի է կարծել, որ զի Սարգիս Գիլանէնցը Ռուսաց կառավարութեան մարդն էր և էնպէս

¹ См. Собрание актовъ, относящихся къ обозрѣнію исторіи Армянскаго народа У. Կատոր, երես 359—363 և 367—371.

եթէ մենք քրքրել էինք էդ արխիվը, շատ թանկագին տեղեկութիւններ կը գըտնէինք Հայոց պատմութեան համար : Բաւական է կարդալ առաջի հատորը վերևումը յիշուած գրքի, 326-ից մինչև 379 երեսը, որ համաձայնվինք էս կարծիքի՝ հետ : Մենք կարող ենք սպասել էս աշխատանքը Մոսկովումը բնակված գիտնական Հայերից, մանաւանդ պատուարժան Ստեփաննոս Նազարեանցից : Էսքան ժամանակ մեր պատմաբանները իրանց ուշքն ու միտքը դարձրել են միայն մեր պատմութեան արտաքին գործերի վրայ, թաղաւորների արած բաների վրայ, ժամանակ է հիմիկ մեր հայեցումաճքը փոխել պատմութեան վրայ և պարապել Հայոց ներքին կեանքով, ժողովրդի սովորութիւնները հաւաքել նրանց ծէսերը, նրանց հայեցումաճքը զանազան առարկաների մասին : Մենք մեր պատմութիւնից միայն իմանում ենք, թէ մեր թաղաւորները ինչ են արել, ինչ պատերազմներ են ունեցել, բայց թէ ժողովուրդը ինչ վիճակում էր, էս մեր պատմաբանները բանի տեղ չեն գցում : Բայց էն էլ պիտի ասենք, որ մենք չենք կարող մեղադրել մեր պատմաբաններին էս մասին. յայտնի է, որ Յերոպոլումն էլ աւելի ժամանակ չէ անցկացրել որ սկսել են ժողովրդի կեանքով պարապել : Հիմիկ բաւական չեն համարում իմանալ, որ փլան փլան ժողովուրդը քրիստոնեայ ժողովուրդ է, աւետարանի աշակերտ, բայց պատմաբանները կամենում են իմանալ, թէ էդ ժողովուրդը ինչպէս էր հասկանում աւետարանը : Հիմիկ պատմաբանները բաւական չեն համարում ասել՝ թէ փլան փլան թաղաւորը էս ու էն արաւ, այլ գլխաւոր ուզում են իմանալ ժողովրդի վիճակը, նրանց սովորութիւնները, նրանց հասկացողութեան աստիճանը, նրանց հայեցումաճքը զանազան առարկաների մասին : Էս պատճառով մեր պատմաբանները պարտական են, եթէ ուզում են դրել Հայոց պատմութիւն էնպէս, ինչպէս որ այժմ հասկանում են պատմութիւնը, իր ուշք ու միտքը դարձնել ժողովրդի կեանքի վրայ, հաւաքել և հըրատարակել նիւթեր էս առարկայի մասին :

Բայ՛ի դի Սորգիս Գիլանէնցի ժամանակագրութիւնը, ձեռագիրը պարունակում է չի 1) Պարսկաստանի պատմութիւնը Հուսէյին Սուլթանից սկսած, էս պատմութիւնը, ինչպէս յիշուած է ձե-

Միւս օտար լեզուները և զբաբառ լեզուն գիտէ, բայց աշխարհաբառ բարբառների հետ ոչ մէկի հետ, ինչպէս որ պէտքն է, ծանօթ չէ : Էնպէսներն էլ կան, որն որ աշխարհաբառն էլ գիտեն, գրաբառն էլ ու օտար լեզուներ էլ բայց Գերմանացւոյ Ֆիլլոզֆիայի հետ և գրականութեան պատմութեան հետ ծանօթ չեն : Բայց հանգուցեալը ամէնը գիտէր, և էս պատճառով ասում ենք, որ նրա մահը մեծ կորուստ է մեզ համար :

Գէորգ Ախվերդեանցը ուղում էր ամէն դաւառի բարբառի հետ ծանօթանալ, շինել ամէն բարբառի քերականութիւնը, բառարանը, ամէն բարբառի պատմութիւնը ու յիտոյ էս ամէն բարբառի բաղդատական քերականութիւնը դրել : Նա սկսեց Թիֆլիզու բարբառից և էս մասին հրատարակեց Սայեաթնովայի երգերը, Թիֆլիզու բարբառի քերականութիւնով, որն որ կարող է օրինակ լինել թէ ինչպէս պէտք է վարվել աշխարհաբառ լեզուի հետ : Էս աշխատանքի մասին մենք մեծ յօդուած կարդացինք Մասեոյ Աղաւնումը, քննիչը մեծ մեծ գովասանք է տալի հեղինակին, բայց բանից երևում է, որ քննիչը ամենեւին չէ հասկացել Գէորգ Ախվերդեանցի աշխատութեան միտքը : Բաւական է կարդաք Մասեոյ Աղաւնու վերջի համարները, որ տեղ որ օրադիրը պաշտպանում է խորէն վարդապետի դատողութիւնը աշխարհաբառ լեզուի վրայ և դուք կը հասկանաք, որ Գէորգ Ախվերդեանցի միտքը աշխարհաբառ լեզուների մասին էնպէս հեռու է խորէն վարդապետի և Այվազովսկու մտքերից, ինչպէս երկինքը երկրից : Ոչինչ նմանութիւն չէ կարելի գրտնել : Եթէ Գերապատիւ վարդապետները ուղում են հասկանալ Գէորգ Ախվերդեանցի միտքը, խորհուրդ ենք տալի առաջուց կարդալ Գրիմի, Հումբոլդի, Բուսլայեվի և ուրիշ բանասէրների շարադրութիւնները և էն ժամանակ կարելի է հասկանան Գէորգ Ախվերդեանցի միտքը : Մինչև էն ժամանակ անկարելի բան է, որովհետև Գէորգ Ախվերդեանցը էնպէս բաների վրայ է խօսում իրա աշխատանքի մէջ, որն որ արդէն ընդունուած է երևելի գիտնականներից և էս պատճառով Գէորգ Ախվերդեանցը յիշում է էս բաները, իբր ծանօթ բան

հարաւ լեզուներ իմանալու համար լաւ քննել մեր հին քերականներու տուած տեղեկութիւնները : Մենք մեր կողմանէ կոտենք, որ էսպիսի տեղեկութիւններ շատ կարելի զրտնել հին քերականների մէջ. դոնեայ Ջրդեանի տպած Գիտնէս Թրակեցու Յունաց հին քերականութեան մէջ, որն որ զբաժէ Բսից առաջ և հայերէն թարգմանած է չորրորդ դարումը, բաւական տեղեկութիւններ կայ աշխարհաբաւ լեզուի մասին :

Գէորգ Ախվերդեանցը հասկանում էր, որ լեզուն պատմութեան ամենազրկուոր աղբիւրն է, էնպէս որ՝ եթէ մէկ ազգից ոչինչ պատմութիւն չմնայ, մնայ միայն լեզուն, էն ժամանակ էլ լեզուի ձևերից, կազմուածքից և բառերից կարելի է իմանալ մէկ ազգի լուծաւորութեան և հասկացողութեան անտիճանը, ինչպէս որ մէկ ճարտարապետի շինուածքից իմանում ենք ճարտարապետի կամ շինութեան տիրոջ ճաշակը : Հօրէս ինչ է ասում էս առարկայի մասին. Գէորգ Ախվերդեանցը • « լուրի մէ քանի տարի հաւաքում եմ կենդանի աղբիւրից հանած կենդանի նիւթեր ժամանակակից Հայ ազգի պատմութեան համար : Հաւաքելիս ունէի միշտ աչքի տակս խնդիրն, թէ դէս ու դէն օտար ազգերու մէջ բնակած Հայերն ի՞նչպէս են ձևացրել իրանց կեանքն՝ մնալով այլազգի ազգեցութեան տակն, ու ամէն տեղ հեշտութեամբ վեր առնելով նրանց սովորութիւններն, երբեմն լեզուն էլ՝ յայտնում եմն արդեօք իրանց կենցաղավարութենում է՞նպէս բուն նըշաններ, որք դոյայնում ըլին ազգի սեփականութիւնն ու շընորհքը : Նայելով էս դժուարալոյծ խնդրին, որն որ պահանջում է ևս տիրող ազգերու բուն ազգայնութենի ճիշդ տեղեկանալն, լաւ տեսնում էի որ ամէնից առաջ քննելուն մէկ ժողովրդի խօսած լեզուն է, ու ձեռաց զլուս դրի լեզուին, որով խօսում են վրաստանում, մանաւանդ Թիֆլիզում բնակող Հայերն, որոց ինքս էլ քաղաքակից եմ : Էս մտքով ժողովում էի հայերէն Առաի, Առած, վիճակախաղ, ու ամէն տեսակ խաղեր, մանաւանդ ազգային երգիչներու կամ Աշուղներու սլառուղները, որն որ պահպանել է ազգն աւել պակաս թէ աւանդութեամբ, թէ գրով, որոյ չիմանալէն շատ զրկանք է կրել ողորմուկ Հայաստանն : »

խորհարարական կամ պատմադրական հանդամանքների ազդեցութիւնով, կամ մէկ երեւելի ձիրք ունեցող հեղինակի երեւելով՝ արեւ միւսների վրայ: Էս պատճառով «Կռուներ» զանազան ժամանակումը տպել է ուրիշ ուրիշ բարբառներով զրաժ յօդուածներ. օրինակի համար երեւնցւոյ լեզուով «Կռուներ» տրպեց Պարոն Պաօշեանցի վերասանութիւնը՝ «Սօս և Վարդիթեր», Թիֆլիզեցւոց բարբառով տպել է «Դարբաղ Վաղոյի մասլաթը», նմանապէս «Ուխտադնայութիւն Ի Թելէթ», Սարգսի նամակները և «Ռուստավիլի» թարգմանութիւնը, «Շաքար Մանուշակեանցի» նամակը, «Գէօ Աւետիսովի» պատասխանը: Ղարապաղցւոց և Աղուլեցւոց լեզուով «Կռուներ» տպել է Դալուստ Շերմազանեանցի «Ասրի և Գլքի» բանաստեղծութիւնը, Թալրիզեցւոց լեզուով «Կռուներ» տպել է Շերմազանեանցի «Թալրիզեցւոց հարսանիքը» և «Իմ նշանածը Արաքն առ հին Նախիջևանցւոց լեզուով»:

Մենք կարծում ենք՝ որ «Կռուներ» օրագիրը էսպիսի յօդուածներ տպելով՝ մեծ ծառայութիւն է արել Հայոց նոր դրականութեանը և պարծանքով կարող ենք յիշել, որ ոչ մի Հայոց օրագիր կամ լրագիր չէ տպել էսպիսի թանկագին նիւթեր աշխարհաբառ լեզուի հետ ծանօթանալու համար: Չենք գիտում՝ արդեօք մէկ գին դնում են մեր ընթերցողները էդ ուղղութեանը, միայն մեր կողմանէ կասենք, ով ինչ որ ուղղում է ասի, որ նոր գրականութեան ապագայ պատմաբանը մեծ շնորհակալութիւն պիտի անի էս մասին:

Դի Սարգիս Գիլանէնցի օրագրի մեկնելումը մեզ շատ օգնեց պատուելի կարասեալ էմինը՝ մեր հայկաբան Մկրտիչ Էմինի հարազատ եղբայրը, որն որ ծառայում է տամաժնումը Սուպսկի ասած պօստումը Սե ծովի մօտ: Նա անցեալ տարի ամառը Թիֆլիզում էր և նա մեկնեց օրագրի դժուար տեղերը: Նրա մեկնութիւնները, կարծեմ, կը բաւս կանանցին մեր ընթերցողներին. որքան մեզ յայտնի է՝ նա լուր դիպէ Պարսի լե-

Ե

ՄՐԲԱԶԱՆ ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅՐ ԱՐԲԵՊԻՄԿՈՊՈՍ ՄԻՆԱՍ ՎԱՐ- ԴԱՊԵՏԻՆ:

Եղև Ըսեշտ Թիֆլ 1723 Օգոստոսի 22 :

—:308:—

Արդ լինի հրամանոցդ , որ էս ներքոյ գրեալն էս տեղիս յաֆալն որ նմրայով մի ըստ միոյն հրամանոցդ արդարարի, որ էստոնք ըռուստեալ: գրել ամ տվել՝ տվելամ ղոսպօտին Բօրղայդերին :

1. Յուլիսի ԼԱ. Համադանցի Սահիջանի որդի Յօվսէփն արիկ քաղաքս, ասաց՝ թէ Համադանայ մին ամիս այ որ դուսամ, ես Համադան իքան՝ Բաղտադայ մին Խայ եկավ Համադան, ասո՝ ց՝ թէ Բառամբօլու շատ ջաբախանայ եկավ Բաղտադ, ամայ ասկար չեկավ. և ասկար կալէ ձէն էլ չկէր. Բաղտադայ փաշէն որ Ըռուստի ասկարին Գիլան գոլն յիմացով Բաղտադայ բիրթըն ինչ քանդած տեղ որ կեր՝ թամամին շինել արեա, որ Ըռուստիցն շատ ախ էր քաշում :

1 Արիկ—էկաւ. իքան—էլած ժամանակը. ջապախանայ—арсеназ, օրջիօ. զէնք. ասկար—զօրք. գոլն—գալն. արեա—տըլա :

պանուն զիլմած ելէլ որ էս ցօսէփն Ըսպահանայ փախել էր, Համադանայ վերայ արեկ Ըռէշտ, որ Աղվանին Ըսպահանայ առուն խաքիւսթ արար՝ թէ ինչպէս ան առել. թիֆլ 1722 Փետրվարի ԺԸ. Աղվան Միրվէսի որդի Մամուզ խանըն ԺԲԻ. ասկարով Քրմանայ վերայ եկավ. Ըսպահանայ վերայ, որ էլ էս օր Աղվանն եկէլայ Վարզան դախիլ ելէլ որ մինչե Ըսպահան ԺԶ. աղաջ այ, որ է Զ. վերստ :

6. Արապի սարդարն էլ էն օրն չափար աղարկէլ Ըսպահան չահին՝ թէ թախիս Մամուզն ուր ասկարօջն Ըսպահանայ վերայ կալման, շուտով էստուր Ֆիքրն արայ :

7. Շահ Մամուզին գալն որ կը լսի՝ թէ թախիս կալես այ, յուքմ կառի իւր բէկլարին՝ թէ որ չանք օմարայ. խան, բէկ և բէկզադայ. և ղուլ ղօռչե կայ՝ յազըվն և թօփ և ջարախանայ հազընցէք՝ որ բիտի գնէք Աղվանին ղարշուն, որ թողէք ոչ՝ Աղվանն Ըսպահան գոյ, սոքայ ԺԸԻ. մարթ և ԻԴ. թօփ կը հազընն :

8. Էլէն օրն մուայսիլ կազարկեն ղեղարէնքն՝ ԺԲԻ. մարթ թվանչե կը բոլորեն կը բերեն Ըսպահան :

9. Փետրվարի Ի. ումն վերոյ Ի. դաֆայ ասկարն ջամզընեն ԼԻ. մարթ և ԻԴ. թօփ, որ Ըսպահանայ վերկըկան կը կընան Գուշարթ՝ որ Գ. աղաջ, որ է ԺԵ. վերստ գընի մընացէլ Աղվանին խասանեն :

10. Վերոյ թարեղումն՝ որ վերոյ ասկարն Ըսպահանայ վերկըկայ, շահ Ջուղու խայերոյն հուքմ կառի՝ թէ ասկարս աղարկեցի կռիվ, ղուք ԳՃ. լեվ աղայ տղայմարդ խայ լեվ ետրաղով աղարկեցէք Գօլվաթ խանին ղուռն՝ որ քէշեկ առեն : Ջուղու քալանթարն և քէթխուլթէքն ԳՃ. լեվ տղայմարթ խայ շատ լեվ ետրաղով՝ թֆանկ, թափանջայ, թուր, ղալխան

6 Թախիս—навыркое, յիրաւի :

7 Ցուքմ—հրաման. ղուլ—ծառայ. ղօռչի—ծառայ. ղարունչ—յանդիման.

8 Մուայսիլ—нарочныи, լրարիր.

9 Դաֆայ—անդամ. ջամ գընեն—հաւաքեն.

10 Գօլվաթխանայ. պալատ և բէկիկ—գորտալուլ. ղալխան—վաճան. յաղհայ—հիմիկ.

13. Ղուլար աղասին Մամուզին խեղ թուշդ կռիվ ելել առում, որ Աղվանին Գ. խեղ հեռայ փախցուցել: Ար Մամուզն շատ սխլաթում ելել Ամանօլայ Սուլթանն որ Ախտմայ դուլ փաթին և Ղուլը բաշտն ուրէնց ասկարօնն որ կը փախցանի, էս Ամանօլայխանն զըրոյ Մամուզին քօմակ, Ղուլար աղասին ուր ասկարօնն մինեկ մեջ տեղն կը գցեն, լեվ կռիվ կտայ Մամուզին խեղ, սարայ կը տեսնեն որ իւր ասկարն նեղ տեղան ընկել, սորայ ասկարն էլ կը փախն կը մնայ Ղուլար աղասին ԲՃ. մարդով Աղվանին ասկարին միջումն: Արքայ էլ սեղեցել ան փախեն, կարեցել չեն: Ղուլար աղասուն տակու մն լեվ ձի այ ելել իւր ձիան գոյանմիշ գնի, ուրն փախս կը գնի՝ Աղվանն հեռնէն: Ղուլար աղասին կը գնայ՝ մին մեծ առվի ըռաստ զըրոյ: կուզի որ առվօն թուցանի, ձին կարացել չե թուել կը ընկանի առվի մեջ, շատ զժար տեղ այ ելել: Աղվանըն յետնէն կը խոսնի, թօխուզով քայլին կը տայ, Ղուլար Աղասին ձիանէն շուռ կըկոյ, կը խոսանեն՝ իրզով կը ծակծակեն, կտանեն: Գետ Ղուլար Աղասուն սպանվելէն կռիվն թամամ գլնի կը դադարեն:

14. Էս վերոյ կռիւ մն Մամուզին խաբար կը բերեն՝ թէ Արապստանայ վալի Սէիդ Ավդուլէն ուր ասկարօնն զընացել այ քոյ Սանդուղ խանին վերայ, իմդատ աղարկիր: Մամուզն կռվում գնի և նեղ տեղ գնի ընկել: Էս ջուդարն կը տայ՝ թէ թողէք իմ Սանդուղ խանին տանեն, մենք սրտով կռիվ առենք: թէ մեկ կը հախտեն խօ մեր Սանդուղ խանին եայ յալդոյ տարած, եայ յեղուց: թէ որ մեղ Աստուած կը տայ՝ որ մենք նոցայ կը հախտենք, մեր Սանդուղ խանէն էլ այ մերն, նոցայ Սանդուղ խանէն էլ գընի մերն: Արապի վալին Մամուզին Սանդուղ խանէն թամամին տարել այ:

15. Էս կռիվն որ կը խաղաղի, Ղզըաշէն ԱՌԷՃ. մարթ այ վեր ընկել և Աղվանիցն ԱՃԼ. մարթ այ վեր ընկել և Ղզըաշէն թամամի զինաթն և սանդուղխանէն, ԻԳ. թօին և ջարախանէն, ինչ որ Ղզըաշէն ելել այ, Աղվանն զաֆտել այ:

13 Ուլար—հեղ տեղ, գոյանմիշ լինել—յուտար, թօխուղ—бывшая, նիղ—победа, նիղակ:

14 Իմդատ—օգնականութիւն:

15 Սանդուղխանէն—զանձարան:

մանէն՝ Ղզլբաշին խնայելովայ արարել, որ մեծ և պատիկ չարսու մն և Աղասայապատայ հիւսօֆն զաֆաեկայ և թաւանել այ և Մամուզին ել յուրմէր արարել ուր ասկարին՝ որ Աղասայպատայ յետ էր բերել՝ ասացել էր՝ թէ կացէք՝ որ Զուղու դանէքն՝ որ քաղաքին զպրշուայ էն, դանէքոցն սիպայ քաշեմ և դանէքն լիվ զայլմեմ, էն չաղն թէ Ղզլբաշին խնայելով առենք, առանց դանէքն կապել մեզ սարֆայ չե կըռիվ առեն :

21. Մամուզին Գ. որ զընի որ Զուղայ առել զընի Զուղայցիք գնացել չեն նման Մամուզին գլուխ տալ : Մամուզին մարթ կողարիի Զուղու քաւանթարն, քէգխուդէքն բերէլ կրտայ : Էս Զուղայցիք քրկըկան Մամուզին յուղուրն, Մամուզին մեծ գատապտան առողն որ առուն Մամաս Նշան այ՝ զըկոյ՝ Զուղուցէքոցն կասի թէ մենք Գ. որ այ եկել անք, չմամ զուք եկել չէք Մամուզ խանին փափուչս, Մամուզ խանըն ձեզ վերայ բարկացել այ, յուրմ արար՝ որ թամամ խայէրոցն զաթլամ առենք : խայերն Զուղաք կը տան՝ թէ ախտխարն Մամուզ խանինն այ, ամայ մենք մին թախտիլի տէր չենք, որ մեզ զաթլամ առէք և մեր մին բուռն մուռտառ արընին տակն էք ընկաման, մենք մեր շահին ըռայաթն անք և մեր Զուղու կէսն՝ թէ մարդ, թէ կընիկ և թէ խիզան շահին յըբմօֆն տարել անք քաղաքն, թէ մենք առանց ձեր հրաման զինք փափուչս, յետի շահ և կամ իւր օմարէքն յիմանին՝ որ մենք առանց ուղել փափուչ անք եկել, մեր Զուղու կէսն՝ որ քաղաքուսն ան՝ թամամին կը ջառթին, մեր չըկոյէ պատջառն էս այ, յալղայ ախտխարն Մամուզ խանինն այ : Էս Զուղաքն

21 Գնացել չեն նման Մամուզին գլուխ տալ—նման, երբորդ դէմն է լինել քայի, յուղուրն գալ—նեքկայանալ, չմամ—խնչու, փափուչ—կօչիկ, զաթլ—առուլ—սուր քաշել, կտտրել—ախտխար—կամք, թախտիլ—մեղք, դիմք—գայինք, չիլի—չգալու, միանջի—միջնորդ, իլթիմալ—աղաչանք, մուրախաղ—ազատութիւն, արձակումն, նուստայ—նուսի, բիւլայ—վալլայ բիւայ, ей Богъ, սուլ—վերջ, մարլախ—գումար, ամնաթ—ձեռագիր, թայլն առուլ—նշանակել, ֆիլ—լուրաքանչիւր, դիան—փողի ամուն է, հարիւր դիան երեք կողել—արձաթ է, քարաղի առուլ—վճարել, դոթնի—название, полосатой шелковой материи, քընիլէ—քնելու, նիան մոեիլ—մէջ չեն մտել :

որ խայերն կը տան Մամուզին, միանջին որ է մուֆտի՝ Զուղեցոյ կողմէն Մամուզ խանին իլթիմազ կառել։ Մամուզն կասի՝ թէ էա խայերոյ արունն բշկեցին ամայ ԱձՖՈ՝ թուաման ջառիմայ գըձեցի վերէրանէն որ շուտ ֆիքրն առնն՝ տան։ Եւ խայերոյն մտերախտս կառել ցեփ խայերն որ դուս գըկան՝ կը գնան Մամադ Նշանին կուշան, շատ կը լան և սան և յայտջ կը ընկանն։ Թէ մեզ նուստոյ էտ չափ փող ուղէք, եկէք՝ ինչ մեր տըներումն կայ՝ ձեզ տանք, բիրայ թէ ուղէք՝ մեր տան բլանիքներն ձեր ձեռն տանք՝ գնացէք մեր տըներն մտէք։ Ինչ որ կայ ձեզ լինի։ Զուղեցիք որ շատ տխւանք որ կառեն։ Մամադ Նշանըն կը գընայ Մամուզին կուշան, դուս կը կոյ՝ Զուղեցոյ խեւ շատ կը խօսի, ՀՈ՝ թուաման սոլ կառի։ Էա մարազին Մամուզին սանադ կը տան Զուղայեցիք և մուսախ թային կառեն Զուղեցոյ վերայ՝ որ գընան ՀՈ՝ թուաման բոլորն։ Մամուզին մուսախը, Զուղու քարն թարն և քէթխուդէքն կը գընան՝ տնէ տուն ման գըկոն, ինչ դատար Զուղայիք մարդարիք, ոսկի, արծաթ, դարբաֆ կը բոլորեն՝ կը բերեն։ Կուտ կառեն, դարբաֆն՝ արծաթըն չարէք, ցին կը վեռուն Զուղայիք, մարդարիքն՝ ոսկին դարու քշեռքով կը քաշեն։ Ֆի մախան ԱՌ՝ գինօֆը կը վեռուն, որ ին՝ թուամանիցն իվել գնի, ԹՈ՝ թուամանի տեղ կը վեռուն։ Զուղեցիք կասն՝ թէ էտաի էլ իվել կարել չենք քարսաղի առել։ Մնացեալին քարսաղին՝ յեփ քաղաքն բայի, էն չաղն կառենք էտուր ֆիքրն։ Եւ Զուղու ԿԲ՝ տիշիկ ան յինք առել, շատ ժամանակ պախելան, Մ՝ տիշիկն յետ ան ալլել ժԲ՝ քըն պախելան՝ որ ուրէնցն կընիկ ան շինել։ Զուղուցուց ԵՌ՝ առաւաճ որ թնի մահուդ, շալ կամպ ան յինք առել, սակարին խաղցուցել և շառ լխէր բարձ, դժակ ան յինք առել՝ ոխն էլ դառ, դալամբար, դըթնի, աթլազ։ Մոնչ կապէքն մոնչ էա քնեք տեղերն՝ փող չեն խաբէլ, դէյրի եկեղեցու գինաթ որ թալանելան և տընէր՝ որ ուրէնց գլուռ նեան մըտել թալանել, տարել և տըներն խարաք էն արարել։

22. Մամուզըն Զուղու գանէքն կապել այ՝ թամամուն սիւղայի այ քաշել և լավ դայիմէլ այ։ Եւ Ղզլաշն էլ ուրէնց

զըմանին դանէքոյն այ սիպայ քաշել՝ լեվ դայմեւայ, հէտ ղայիմեւէն՝ պաշլամիշ ան արարէլ կռիվ առեւն՝ որ Աղվանն կարացել չե քողաքէն մին թիւ տեղ առուլ :

23. Մամուդն տեսել այ՝ որ կարել չե քողաքըն մտնել, ուղեցել այ՝ որ մարդ մէջ գծի՝ որ շահին խետ սօլ առի, որ Խօրասանայ երկիրն, Քրմանայ երկիրն և քանի Ռ. թու ման փող շահիցն յինք առու, խտուրն խաշտի, քողաքէն ձեռն վեռու՝ գընայ : Մամուդին՝ մարդիքըն անացել ան՝ թէ էտ առել մին՝ որ շահ էն տեղն չե խասել՝ որ քեզ էտ չանք փող և երկիր տայ. թէ էտ արարիր՝ մեզ խամար շատ վատ գնի և կը յիմանան որ մենք աջիկ անք փնացել : Մամուդն կասի, թէ ապայ ի՞նչ առեմ. մենք էս չանք ջաֆայ քաշեցինք՝ եկինք, քողաքն կարել չենք առուլ. և թողման չէք որ էս փեղափն էլ առեմ : Մամուդըն ուր մեծայմեծօվն մոտաճաթ կառնն՝ թէ էլ ուրիշ ճար չկայ, դէյրի էս՝ որ պիտի թամամ քողաքին Գ. դօվըն ճանապարհէն կապել՝ որ էլ ազուղայ չը կընայ քողաքն, որ զըզնու թիւն քաշին, բեւքի թէ աջիկվեն քողաքն մեզ տան, թէ էսպէս կարեցանք ոչ քողաքըն առուլ, թէ չէ էլ ուրիշ կերպիվ կարել չեն քողաքըն առուլ : Մամուդն էս մապաճաթին ղայիլ կըկայ՝ յուբմ կառի՝ քողաքին թամամ ճանապարհէն կապել կըտայ՝ որ թողման չե ելէլ՝ թամամ քողաքըն մին մարդ մանի, շատ սխալթի մեջ կը գծի Ղզլբաշին՝ որ քողաքըն շատ զըթուղ կըընկանի :

24. Էս ղալայբալըղումն Գ. խան և Ռ. մարթօլ՝ որ է Համադանայ Ֆարաջուլայ խանն, Շահվէրդի խանն, Զանկանայ խանն՝ զօլման ան ելէլ Ըսպաճան շահին քօմակ : Մամուդին ջաշուշն զը կայ՝ էս խաբարն կը բերի, թէ Գ. խան և Ռ. մարդօվ զօլման ան շահին քօմակ : Մամուդն էլ էն սաճաթին յուբմ կառի Նասուրուլայ քօռ սուլթանին Գ. մարթօլ վեր կը կայ՝ կը գնայ վերայ ասկարին ղարշու : Ըսպաճանայ Գ. ղնաղ հերկար չին՝ սաբայի Ղզլբաշի ասկարին կը խասանի :

23 Ստուրն—հետ. մին—մի. աջիկ—նեղացած. փեղաթ—сложно, բան. դովր—բոլորտիք. աղուղայ—պաշար. զընու թիւն—սովածութիւն. ղայիլ—համաձայն. ղթուղ—թանգութիւն :

24 Զաշուշ—լրտես. զօնաղ—станция, իջևան :

Ղզլբաշն վերհկայ. Աղվանն բիղայֆիլ Ղզլբաշնն ասկարին վերայ կը թափվեն՝ կը տան՝ Ղզլբաշն կը կոտրեն. Ղզլբաշնցն ԱՌԵՃ. մարթ վեր կը ընկանի. մնացեալն կը փախեն. սոցայ ղինաթն և աղուղէն և սանդուղեանէն՝ Աղվանն կը զաֆտի՝ կը բերի Մամուղին :

25. Ալե-Մարդան խանն էՌ. մարդով Խոնսար գընի, որ ուզում ելէլ գոյ Ըսպահան շահին քօմակ, յեփ որ վերոյ Գ. խանին կտրվեն կը լսի՝ Խոնսարայ զուս չե գընաման, տեղն կը մնայ :

26. Յուլիսի ամսին Բախտիարայ խանն ԸՌ. մարդով Նաջաֆայատայ գըմանօֆն գընաման ելէլ շահին քօմակ : Մամուղն որ կը լսի, թէ էս չանք ասկարայ գընաման շահին քօմակ՝ էլ էն սահաթըն Նասուրուլայ քօռ սուլթանըն ԳՌ. մարդով կաղարկի նոցայ ղարշուն : Ըսպահանայ Գ. աղաջհերկար՝ որ է Ի. վերստ, սաբայի էս ասկարին կը խոսանեն՝ կը տեսնեն՝ որ էս Ղզլբաշի ասկարն ընկելայ բաղէրն՝ եմիշայ ուտում : Քօռ սուլթանն ուր ասկարօֆն բէղաֆիլ էս բախտիարուն ասկարին վերայ կը թափվեն՝ կը տան՝ կը կը կոտրեն, ԳՌ. Բախտիարի կըսպանեն, մնացեալն կը փախի :

17. Քաղաքիցն էլ էն օրն ախտմայ դովաթն և Խաղում Ամադ աղէն՝ որ ղուլար Աղասի գընի՝ ԸՌ. մարթով թօխու գըմանօֆն գուս կը գընան՝ Աղվանին խեռ կռիվ կառեն : Ախտմայ դովաթն փախափ, Ամադ աղէն ընթ կռիվայ արարել. ամայ ախիրն Ամադ աղէն էլ կտրելան, էլ փախելայ Ղզլբաշնցն, ԱՌ. մարթայ վերընկել, մնացեալն յետան փախել քաղաքըն :

28. Էս ամսին ղթուղն քաղաքումն շատացավ, որ քաղաքումն ցորենն ֆի ղիզըն Ը. թուման, բրինձըն ֆի ղիզըն Ժ. թուման, ուղըն ֆի ղիզըն ԺԲ. թուման, շաքարն ֆի ղիզըն ԺԲ. թուման, խափն ձուռն ֆի դանէն ԲՃ. դիան : Քաղաքումն ոչխար, կօլ, ձի և ուխտ չե ելէլ մնացել, որ ուտեն, նաչար

26 Բախտիար—ցեղի անուն է :

27 Խաղում—նիրքինի. թօխի—ղեղի անուն է. ախիլ—վերջ :

28 Դանայ—հատ. քար—քեար, ներդործութիւն. արախայ—երեխայ. զարար—ձեւ.

իշի միտան ելէլ ուտում: իշի միտեէլ Ֆի դիտոն Բ. թուման: ամեն խորան էլ էստոնց դօրայ, որ քաղաքին խնդին դըզ- նութենէն շուն, կատու, կաշի, փէլին, խին փնփուռ և էլ ինչ ջանախար որ ձեռն ելէլ գործան՝ ուտուման ելէլ: Գըղնու թիւնըն յէնց քար տրարել՝ որ մին աղի քար մեռել ելէլ՝ ծը- ծէրը կտրելայ կերէլ և շատ մարթ ուր տրախէն՝ որն խաշիլ այ՝ կերէլ՝ որն խնդիլայ՝ կերէլ: Քաղաքըն էսպէս զըթընդայ ելէլ՝ ամայ Աստուծոյ ողորմութիւնն: Հոյոց խասելայ՝ որ Զո- ղայ էն շանք ազուղայ ելէլ՝ որ խոյն Ֆի դիտոն Աձ. գիտն, Ա. օջիտոն ԱձԾ. Բձ. գիտն ելէլ: Ամեն տեղայկերք էլ էս զարարօղն յէժանայ ելէլ:

29. Դահ տեսիլայ՝ որ էլ ճար չե մնացէլ քաղաքումն էլ ուտելիներք չկայ, ջաութիւնն օր ըստ օրէ իմելանման այ, շահ ուր ծմարեքոց խեղ մատակհատ կառի՝ թէ մենք խօ էլ կա- րել չենք Մամուդին յետ դառցան և Մամուդն խօ քաղա- քիս Գ. դօմն բանելայ՝ որ թողման չե ազուղայ դոյ քաղաքս, էստուր չարէն էսայ՝ որ մինէլ չե աղարկենք Մամուդին կուշ- արն՝ թէ քեզ փոզ և երկիր անք՝ քաղաքէս ձեռն վեռ դը- նայ: Էս մատակհատին սխն էլ ըսըղայ կըկան: շահ մին էլ չե կաղարկի Մամուդին կուշտն և էլջոնն օրդնի կը տայ՝ թէ դնայ ինչպէս կարելատ՝ Մամուդին խեղ շինէ: թաք լինի, որ Մամուդն մեզ խեղ խաշի՝ քաղաքէս ձեռն վեռս դնայ:

30. Դահ էլին կաղարկի Մամուդին կուշտն՝ թէ քեզ Ծ. Կ. մինչե ԱձՌ. թումանն փող խորասանայ երկիրն, քրման և ակնչիկս քեզ տամ: եկ խաշտենք՝ ես դու խեր որդի գառնանք, վեր կաց դնայ քաղաքէս ձեռն վեռ: Էլջին կը դնայ Մա- մուդին կուշտըն ինչ որ շահ ասացէլ դընի՝ կասի:

31. Մամուդն վերայ դըղին ըռազի չե կտրման, էլջոնն էս ջոզղաքըն կը տայ՝ թէ էտ ԱձՌ. թումանն և էտ երկիրն՝ որ ինձ աս տալման՝ ետոնք խօ իմնայ. իմ փոզն և իմ երկիրն էլ ինձ աս տալման, մին էլ աստուծո թէ ակնչիկս քեզ տամ: ես ի՞նչ առեմ քոյ ակնչիկն, քոյ ակնչիկքըտ և թամամ զա- թըղ կը տամ իմ զուլերին: էտ Ֆիքըրն որ արարելաս՝ Ֆիքը

29. Դառցան—միտել պիտի ըլլի, փնփուտայ գառնանք, օրդի— կրտունք:

չե. ես Քաղաճանայ ձեռն վեառլ չեմ: Կապէս ջուղաք կը տայ
էլուն և կաթի թէ՛ ինչ լսեցիր դընայ՝ քոյ շահին տայ:

32. Էլին որ Մամուզին քշտէն դը կոյ շահին կուշան, ինչ
որ Մամուզէն լսել դընի՝ շահին կաթի: Շահն ուր օմարէ-
քօմն Ֆիքր Կառնն՝ որ քաղաքէն փախչեն՝ կը տեսնեն որ
ճանապարհէն կայս այ՝ փախելէ ճար չկայ, մասլահաթ կա-
ռնն՝ թէ էս էլ խօսուրի ճար չկայ, մեր ճարն էս այ՝ որ քա-
ղաքն էլ և մեղ էլ տանք Մամուզին ձեռն: Էս մասլահաթըն
Հոգտեմբերի ԺԱ. ու մն արարին:

33. Հոգտեմբերի ԺԲ. քումն շահն Գ. ուխտ ունէր, Գ.
ուխտըն էլ դուռքան կարեց՝ խաղի բաժանեց, լազլ նամազ
արար: Էլ էն օրն կէս օրին շահն ուր օմարէքօմն ձիայվորվե-
ցան, գընայցին սօֆուն տախու մն կանգընեցան, մարթ աղար-
կեցին Մամուզին կուշան՝ թէ շահըն ուր օմարէքօմն ե-
կելայ քեզ տեսութիւն և քեզ փանայանք բերել: Աղվանա-
նին ասացելան՝ թէ Մամուզըն քունայ, կայեք մինչ քընէ
վերկայ: Մամուզըն դարձունայ էլ էլ, ամայ դատիդիան էս
ջուղարըն ան տվել շահին: Շահն սօֆուն տախու մն կէս սա-
հաթ արեւումն ձիայ վերայ կանգնացուցելան, կէս սահա-
թէն հեռ շահին կը տանեն Մամուզին կուշան:

34. Շահն որ կը մանի օթաղն՝ Մամուզն նստած գընի, ոտ-
նին վերայ կը կանգընի, շահըն կաթի՝ սալայմալէ քում: Մա-
մուզն շահին յիրէն չե ախանում, կախանի գետինն՝ կաթի ա-
լէ քալամ: Աը նստի և շահին էլ ուրնէն քաշ տեղ նշանց կը
տան, շահն էլ կը նստի: Շահն ուր ձեռնօմն ջղէն գլխիցն կը
խանի՝ կը տայ Մամուզին ախտամայ դօլվածին՝ թէ տուր
Մամուզին՝ որ ուր գլուխն խարի: Ախտամայ դօլվածն ջղէն
շահիցն յինք կառու՝ կը տանէ՝ որ տայ Մամուզին: Մամուզն
թեք կախանի, յինք չե առման ջղէն էլ յետ կը բերի՝ կը տայ
շահին ձեռն: Շահըն ջղէն վեր կառու՝ դընայ Մամուզին
կուշաըն, շահըն ուր ձեռնօմն ջղէն կը խարի Մամուզին գը-
լունն, կաթի՝ թէ որդի, իմ մեխքէն Աստուած էլ իմ թաղա-
ւորութիւնըն ինձ արժան չե տեսման, յալդայ իմ թաղա-

33. Ստիփա—տաքի անուն է. փանայ—հովանաւորութիւն:

34. Ջղայ—արքունի թաղ, խարել—մօցնել, թէ—չայ, յառէչ—առաջ
փանայ բերել—խոնարհիլ, հովանաւորութիւն տակը մանել:

որով թիւնըն Աստուած քեզ տվեց, էտ խմ գլխին ջղէն այ՝ որ խարեցի քոյ դլուխն, շնախափոր լինի քոյ թագաւորութիւնըն : Շահն էստոնք կասի՝ գրկոյ ուր տեղն կը նստի : Էն չաղն, թէ՛ զաֆայ կը բերեն, յառէչ Մամուզն և շահն զաֆայ կը խըմեն : Բլուջի սարդար դընի Մամուզին կշալն, էս սարդարն շահին կասէ՝ թէ էտ ի՞նչ բան էր՝ որ դու արարիր ըզմեզ՝ էս ի՞նչ օրի խառացոյցիր՝ որ եկիր Մամուզին փանայ բերիր, ձեզ էլ՝ մեզ էլ սրայ յետիր շինեցիր : Եւ Մամուզն Բ. օր շահին ուր կշալն պախելայ : Էս Բ. օրն շահն Մամուզիցն ջուկ այ ելել նստած և ջուկ խաց այ կերէլ :

35. Մամուզն էլ էն օրն յարանայդէմ ուր մեծ սարդար Ամանօլայ սուլթանն ԲՌ. Աղվանօվ աղարկէց քաղաքըն՝ որ քաղաքին սիպինին բանայ, ուր մարդիքըն քէշիկ կան՝ զընտցանի և շահին գօլվաթ խանէն զաֆաի : Էս Ամանօլայ սուլթանն ԲՌ. Աղվանօվ դընայ քաղաքին սիպինին բացավ՝ ուր մարդիքըն քէշիկ կանդընացուց և յետոյ դնաց շահին դօլվաթ խանէն մտավ զաֆաէց և ուր մարդն քէշիկ կանդընացուց, շահին տունն՝ որ չանք խիզան որ ելէլայ՝ թէ ուր յարամն, թէ ախշիքըն, թէ քիշիքըն և զարափաշէն պաշլափշ կառնն վայելն, բացը ազադակ և լաց կը բարձրացանն որ ձէնէրանին թամամ քաղաքըն կը բռնն, և Ամանօլայ սուլթանն խաբար կաղարկի բազ Ֆարապատ Մամուզին՝ թէ քաղաքըն էլ, դօլվաթ խանէն էլ զաֆանցի՝ որ քաղաքին թամամի քէշիկէքըն մեր մարդիքըն ան : Մամուզըն խաթրջամ դընի :

36. Հողանմրերի ԺԳ. ումն առաջօտէց Մամուզն շահին խեա կը ձիավորվի՝ որ գոն քաղաքըն : Մամուզին յառաջկումն ԺԲ. ջառչն ձիավոր շահին օրէնքին նալաթ տաւլօվ՝ կը կնան

35 Զարանայդէմ—вечеркомъ, իրիկնադաշին . սիպինի—յոյնակի է սիպայ բառի, զարափաշ—աղախին, վայել—աղաղակել :

36 Զարչի—крикунъ, который объявляет о чемъ либо публично. խաջու—խողանանու թաղի անուն է, նաշլաթ տաւլ—անիծել խօլվաթ—առանձին, ալայի արարած—ալլայ տակլլօվ, չարչալի—четыре бассейна, չորս աւաղան, մուսաուրայ—смутное время, զալմաղալ, մին իւրմն զլախ—слишкомъ :

Ներառւոյ կարմնօփն՝ Խաջուայ վերայ քաղաքքն կը մանեն։ Շահ
Մամուկիցն ջոկվելայ, խօլվաթ ճանապարհօլ գընացելայ դօլ-
վաթ խանէն : Խաջուայ մինչև դօլվաթ խանէն փխանդաղ ին
դձէլ՝ զառ, զառբաթ՝ որ Մամուկն ձիօվ վերէն դնաց : Որ
Մամուկն ուր ասկարօփն՝ արջի արարած՝ չար յավզին դըռ-
նօփն գընացելայ դօլվաթ խանէն : Մամուկըն Բապահան էս
կերպիլն առէց և զաֆտէց՝ որ դառցալ շահ Մամուկ : Մա-
մուկն կռփում Ղզլբաշկնն ՄԻ՝ մարթ այ ջառթէլ (50,000)
Բապահան մուստարայ ժամանակն քաղաքին միջումն դիմու-
թենէն խալիս այ ջառթփել ԱձԻ՝ ջան (100,000) : Վերջոյ Բ-
դաֆայ ջամն ելալ ԱձՄԻ՝ ջան ջառթված (150,000) : Էս կըռ-
փումն ասումին թէ՛ Աղվանիցն ԲԻ՝ իցն մին իքմին գլուխ
վերայ ընկէլ որ ջառթփէլայ :

57. Հողատնմբերի ժեշու մն Մամառն շահին խաղինէն բայ-
էլ այ, որ զաջտ առի: Նաղդ փողայ դուս եկէլ Գր. թուման
և շատ ջուայիր, մարդարիւ, զաւբաջ և ամենայն զինխթ
շատ այ եկէլ: Էնդուր այ նաղդ փող փորք դուս եկէլ որ քա-
ղաքն մաւասարայ ելած վախտն շահն ուր թումամ ասկա-
րին Թ. աթիս օրէն մարդայգլուս Գ. ոսկի դօնլուլ այ եկէլ տալ-
ման՝ որ ասկտն սրտօլ կալլ առնն՝ որ բէլքի Աղվանին յէտ
դառցանն, խօսօնչիւ չնն կարայեկ շինեկ:

58. Մամուլին շահին դողլաթխանումն այ տեղ տվել, որ
 դողլաթխանումն այ նստած և շահին Գ. կընիկ էլ այ տվել :
 Եւ ալմուղ բայրամին շահն Մամուլէին խնդրէլայ՝ թէ ինձ
 Բ. կընիկէլ տուր՝ որ անմանին էլ տվել այ՝ թէ Ֆլան Ֆլան
 կընիկն կուղեմ : Մամուլին շահին ուզեցած Բ. կընիկն էլ կտայ,
 եւ շահն Մամուլիցն ջուայիր էլ կուզի, կըտայ : Շահն էս
 ջուայիրն ուր կընանքոյ խամար զինաթ շինել կը տայ : Եւ
 զարկարաշին՝ որ զինաթն կը շինի՝ կը տանի շահին կըտայ :
 Շահն կասի՝ թէ դու խբա՞ր աս՝ որ ես յալդայ փող չունիմ
 որ քեզ վարց տամ : Մամուլին կասեմ՝ որ քոյ վարցըն տայ :

38 Աւուուզ—իսպէ Է, պիտի կարգաւ Նաղուուզ. անմանին—անունն, անուամ, անուաները. զարկաբաշխ—զարկադրոյի մեծը. դիտանել—տեսնել. զանցան—զոցա, գլանցո. դարբ—շէքա, դէպք. Գ շ շնաբաթ—տեղի մանուն է. խալաթիբել աւ—; սրկորդի եմ. գուշնաբաթու—լացառաւ:

Եւ Մամուղն մին Աղվանի ուղբաշի ուր թարինօջն թային այ արարէլ որ համիշայ շահին քէշիկն առի և շահին լիվ դինջ ան պախում: Եւ Մամուղն բաղի վախտ կը կընայ շահին դիտանի՝ որ է տեսութիւն, և բաղի վախտ Մամուղն ուր բեզլարն կաղարկի շահին տեսութիւն: Եւ շահն Մամուղին տասայելայ թէ՛ ևս Ղղբաշին ավատայցի՝ էս տեղն խասայ, չննի թէ դու էլ ավագաս, որ էս Ղղբաշէրն խային ան, դանալան ջառթիր, դոքայ ինձ խամար ինչ խեր արարին, որ բեզ խամար ինչ խեր առեն: Մամուղն Բսպահանն որ առելայ Զ. ամէն յէտ շահին կասի թէ՛ քեզ աղարկու մամ Ղանդահար՝ որ գնաս՝ տեղն էլ տեսնես, և շահին կաղարկի դարի Ղանդահար: Շահն քաղաքէն մին ղօնաղ կըզընան Գուշնաթթ: Մամուղն շահին խտ մին Աղվանի սուլթան կընի տրէլ՝ որ շահին տանի՝ Ղանդայհար խասացանի: Շահն Գուշնայթթ կը նաչաղանայ՝ շատ կը տրտի և կը լայ և էս Աղվանի սուլթանին կողորմորայ՝ թէ ևս խալայորէլամ, ինձ յո՛ւր այ աղարկում, ևս ինչ բան ունեմ Ղանդայհար: Էս սուլթանն Գուշնաթթու Մամուղին կը զրի՝ թէ շահն նաչաղացելայ և խնդրումայ՝ որ շաղաթ առէս՝ յէտ տանէս: Մամուղն էլ յուրմ կառի և էն սուլթանին կը գրի՝ թէ էտ մօլէն վեռ յետ բեր: Էս սուլթանն շահին Գուշնաթթու վեռ կառու յետ կու տանի Բսպահան դօլթթխանէն՝ էլ ուր տեղն կը տանի և ուր Ե. կնիկն էլ ուրն կը տան: Շահին խարջն Մամուղն այ քաշում:

39. Շահին որդիքն և տխբերքն Լե. ջան ան ելէլ՝ որ էլ դօլթթխանումն այ պախում: Էստունց վերայ էլ մին Աղվանի ուղբաշի այ թահին արարէլ՝ որ ուր թարինօջն սոցայ քէշիկ ան քաշում, և էստունց էլ լիվայ պախում և էստունց խարջն էլայ քաշում:

40. Մամուղն շահին և ուր որդացն էնտուր այ լիվ պախում՝ որ չուն շահին մին որդին Բսպահանայ փախելայ Թարվէզ, թէ էս շահղաղէն փախել չնէր՝ Մամուղն շահին թամամի զաթըն վարթարաֆ կառէր:

Կան հոլով է. չաղանթ — չորհ.ք. մօլա — употреблено въ насмычку.

40 Վարթարաֆ առու — ուշացնել:

41. Շահին մին ախչինկն Մամուզն այ յինք առէլ մնացեալ ախչիէքն և քվէրքն և շահին հարամն, ոխն էլ ուր օմարէքոյն և ուր ուզբաշքոյն այ տվել :

42. Մամուզն որ Բսպահան կառու՝ օլ որ զըկոյ մուսբաւէքայ քառել՝ սպանում չէ, օլ գոլման չէ մումբարէքայ առել՝ կանչումայ ելէլ սունկ առում և ուրն սպանում :

43. Ղզլբաշնյն ժ. օմարայ կը մնայ, ինչ չինի վերայ որ ելէլան՝ էլ էն չինըն ուրէնյն կըտայ. Ախտմայ դօլվաթն ուր Ախտմայ դօլվաթն կը շինի, ղոռչին բաշի և ղուլար աղասին էլ նոյնպէս. և ղոռչի բաշուն էլ և ղուլար աղասուն էլ յուքմ կառի՝ թէ ինչ ղուլ՝ ղոռչի որ կայ, ոխն էլ բօլորեցէք՝ որ էլ մուղարար լինի՝ որ ուրէնյ օլօֆէն աանք և ամենայն ժամ յաղիր կան :

44. Հոգանմբերի Խթումն Մամուզն մեծ մջլիս արար՝ որ Աղվանին օմարէքն էլ և Ղզլբաշի օմարէքն էլ՝ թամամուն կանչել այ մջլիս. Ղզլբաշի ախտմայ դօլվաթին, ղոռչու բաշուն, ղուլար աղասուն ասացելայ՝ թէ գուք խաբար էք՝ որ էս երկիրն շահսուլթան Յուսէնին ժամանակօջն ինչպէս խաբար էր ուր փշութենէն՝ որ աղայլաթ չունէր, նայդան էր և բիբամալէր. յաղդայ որ էս եկելամ՝ էնպէս չեմ ուզում լինի՝ որ յառէչ կիք՝ էս ուզում եմ՝ որ քաղաքիս վատըն վարթարաֆ առեմ, լեվէրին և ինձ սրտօլ ուզողին՝ մասուր և ինամտամ և մարդարի խասացանէմ. յաղպայ էս ձեզանէ խաթիրջամամ՝ որ ինձ սրտօլ ուզում էք, նահաթ ֆիքր առենք՝ որ շահզաաէն ձեռն բերենք՝ որ աշխարհս վարդարար լինի. և Ֆարաղաթվենք՝ որ հաքիմն ուր հաքիմութիւնն առի, ըռայաթըն ուր ըռայաթութիւնն առի, որ էլ արուն չը վեր-

42 Մումբարէկայ առու—չնորհաւորել. սունկ սոուլ—սունը աւերել, КОНФЕРОВАТЬ.

43 Օլոֆայ—ռոճիկ :

44 Աղայլաթ—սահմանադրութիւն, կարգ. նայդան—աղէտ. բիքամալ—անխելք. մասուր—իշխանութիւն, սլաութ. ինամ—սլարդեւ. մարդարի—լարձր անտիճան. նալաթ—հիմիկ. վարդարար—հաստատ. Ֆարաղաթվել—զինջտնալ. ֆաթայ—Ղզլբաշի լան կաղդալ հաստատութեան համար. օխմիչ առու—կարդալ. ո ղուլ—առաջին. ղուսմանք—կարծիք. ղարբ—զօրութիւն :

դառնայ : Էս օմարէքն որդում կուտն և ֆաթայ օխմիշ կանեն՝ թէ մենք ձեզ սրտով կուզենք և ձեր ուղուբումն աբուռնէրանիս կը թափենք : և ակամայ դուլաթն Մամուդին կասի՝ թէ յուբմ կառես : Էս շահադէ կը գրեմ՝ որ յինքըն դոյ քոյ զուլուլն և քեզ հնազանդի : Մամուդն ասացէլայ թէ գումանք չը կոյ՝ թէ շահադէն իւր կամօքն դոյ ինձ յընազանդվի : Կիտի որ թրի զարբով բերենք : Էս սարդար և ասկար թային կառէմ կաղարկէմ Ղազվին՝ որ շահադէն բըռնեն բերեն :

45. Հոգտեմբերի Լ. ումն Մամուդն հրաման կառի ուր ասկարին՝ որ ասկար թայեար առնն : մեծ սարդարն Ամանօլայ սուլթանն, Աշրաֆ սուլթան, Նասրուլայ քոս սուլթանն Զո. Աղվան Բո. Ղալբաշ թայեար կառեն՝ որ ակամայդուլաթին ակաբեր Ղալբաշի Բո. մարդին գլուխ կը շինի՝ որ թէ Աղվան թէ Ղալբաշ ջամն այ Ըո. մարթ : Որ Նոյեմբերի Բ. քումն էս Ըո. ասկարն վերոյ սարդարանոցովն Ըսպահանայ վեր կացին՝ զընային դիքայ Ղազվին, որ Ղազվին զաֆտեն և շահադէն բռնեն բերեն Ըսպահան :

46. Նոյեմբերի Գ. ումն Մամուդն ակամայդուլաթին էշեկ աղասուն կաղարկի Քաշան, որ տեղին վէզըութիւն կը տայ էս էշիկաղասուն և էս նոր վէզերն Չափարվայր կաղարկի Քաշան և Քաշանըցիք էս նոր վէզերն զոլէն զայիլան կացել և լելլընդունելան :

47. Ամանօլայ խանն ուր ասկարօվն զընացելէր՝ Քաշանայ մօտ կացելէր, Քաշանայ խին և նոր վէզերն Քալանթարն և քէթիսուդէքն լելլ փէշքաշով Ամանօլայ խանին փիշվազին գընացել : Ամանօլայ խանն էստոնց խեռ լելլ սէր էր աբարէլ ասացելէր թէ՝ խաթրջամ կացէք Մամուդ շահին շաղաթօվն ձեզ լելլ տիրութիւն կառենք : Քաշանըցիք էս Ամանօլէ ձիան ոտնին տակըն զառ փայխանդաղին գըձել՝ որ մինչի Քաշան յանցան կացել գընացէլ դարի Ղում :

46 էշիկ աղասին—министръ иностранныхъ дѣлъ, իշխան արտաքին գործոց. Քաշան—քաղաքի անուն է. չափարվար—սումանձին զոբձի համար զրկուած մարդ :

47 Փիշիվազ—լնդ առաջ, настрѣчу. Ղում—քաղաքի անուն է :

48 Ամանօլայ խանն ուր տակարօջն որ կը խտսանեն Ղոււմ, կարել չեն Ղոււմ մանեղի, չուն որ Ղոււմըցիք զօւ կառեն սան քան. Ղոււմ բայ կը թողուն՝ կը գնան Սափայ. կը տեսնեն որ Սափայ Զո. ասկար կայ Ղզլբաշի էս ասկարն կը տեսնեն՝ որ Աղվանն արեկ սոքայ կը փախչեն. Աղվանն սափայել յանց կը կայ: Շահադէն Ղաղվին գնի՝ կը լսի որ Աղվանն սափայել յանց եկայ Ղաղվին էլ բանդ չե ելէլ՝ փախելայ գնացելայ Զանկան:

49. Աղվանըն որ Ղաղվինու կը մօտանայ, Ղաղվինու մեծ փոքրն սազով կը դոն Աղվանին փիշվազ, Ամանօլէ ձիան սոթ տակն փխանդազ կը գծեն ազաթով կը տանեն քաղաքըն, յա մէնու ուր գօրայ տուն կը տան:

50. Ամանօլայ խանըն, որ Ղաղվին կառուն քանի օրէն յետ քաղաքըցուցն ազուղայ կուզի: Ղաղվինըցիք զայիլ կը կան շուտ քանի Ռ. դիտր ազուղայ թայեար կառեն և մնացեալին Ֆերուսն գրնեն որ հաղիբեն տան:

51. Ամանօլէն Բ. օրէն հետ Ղաղվինու խալիսիցն Բո. թու ման փող կուզի, Ղաղվինըցիք էտուր վերայ խոսկ շատ կը խօսեն: Որ կը բերեն Զո. թուման, սօլ կառեն՝ որ բողբեն տան որ Ֆերուս գրնեն՝ որ շուտ բողբեն հետ փող և զահիրայ ուզելէն, Ամանօլայ խանըն կաղարկի՝ թէ մեզ Ծ. ազաթ աղջիկ տվէք: Էս բանն Ղաղվինըցէքոցն տիր շատ դժար գը կոյ, ամայ էլ զայիլ կը կան՝ որ աղջիկ բողբեն տան:

52. Ամանօլայ խանն՝ որ Ղաղվին կառու տեղին Քայէրոցէն Գձ. թուման փող կուզի, չուն Ղաղվինու Քայերն ակնկաւ ան, թամամ Ղաղվինըցիք շահատի կը տան՝ որ չուն և որ ան օրն դատուման օրն ուտուման, ասացելայ թէ էստի յառէչ քանի որ շահին մալէք ելէլ տալման՝ էլ էն տվէք, իմ ԺԲ. վրացի կովարար ունեմ՝ տվէք նոցայ և նոցայ մարդազլուխ մին աղջիկ էլ տվէք: Էս վրացիքն Քայէրոյ խետ շատ բիայութիւն և շատ ըստվայի կառեն՝ որ Աղվանն էլ չե ե-

48 Սանքան—սրանց, սոցա. Սափայ—տեղի անուն է:

49 Աշաթ—պատիւ:

51 Շահիրա—աշխարհ:

52 Շահատի—վկայութիւն. մալ—տուրք, податъ, կայք. գաղել—ծածկել, թագցնել:

էլ էնպէս անիրաւութիւն առում, և յետի Ղազվինըցիք Աղվանին կը կոտորեն՝ Ղազվինըցիք ուղուման ելէ՛լ որ էս վրայէքն ջառթեն : Ել վերոյ խայերն էս վրայէքոցն կը դադին և յէնց կը պախեն՝ ձեռն չեն ընկաման, էսպէս պախելին :

53. Ամանօլայ խանն քանի Մուասիլ կազարկի բաղաբըյէքց կուշան՝ թէ փողն նադդ ուզեն և ախկէքն շուտ բերէք, ինչէք թաղաֆուլ առում, պիտի որ էս օր բերէք, եթէ էս օր բերիք ոչ ձեր դուռն կը գնայ և շատ զօռ կառի և խայֆաթ կը տայ : Ղազվինըցէքոյ հողին բերէրանին կը խասանի : Նասուրօլայ քօռ սուլթանըն՝ որ Ռ. մարդօվ գընացել գընի Սյրայհար և Խօռօմդարայ և էս Բ. գեղին մարդն Աղվանին խեւ կռիվան արարել Աղվանիցն ԳՃԾ. մարդ էր վեր ընկել, Աղվանն յետ էր փախել՝ եկէլ Ղազվին : Ղազվինցիքն էս Բ. գեղին խաւահարն որ տեսելին՝ ուրէնքն էլ սրտին բահամ արարել ասացելան՝ թէ էս բանն բան չէ : Ղազվինցիք մասլահաթ կառեն՝ թէ էս կենդանութիւն չէ՝ որ մենք ունենք, լավ ա՛յ որ Աղվանին խեւ կռիվ առենք : Եայ ջառթվինք՝ եայ ջառթենք պօծանենք :

54. Ղեկտեմէ երի Ի. Աղվանին Մուասիլանին գընացել ան Ղազվինըցէքոցն զօռ ան արարել, թէ ինչեկալ փողն, ազուղէն և ախկէքն, բերէք ավէք թէ չէ՝ ոխդ էլ շանպէս կը ջառթենք և Աղվանին մեծ մուասիլն Ղազվինըցէքոցն ասացել ա՛յ, թէ ա՛յ շնէր՝ չո՛ր յետի խաբէք մեզ, եթէ էս օր փողն էլ ազուղէն էլ ախկէքն էլ ազարկեցիք ոչ՝ ձեզ դաթլամ կառենք : Էստուր ջուղաբն մին լօթի ա՛յ ավել, թէ մենք շուն չենք, շուն դու աս և քոյ աղարկողն ա՛յ : Էս խօսկին խամար մուասիլն ձեռն թրի կը դնէ՝ որ տայ էս լօթուն սպանէ՛ամայ լօթին քան ըզնայ կանուխ թուրն խանելայ ավելայ մուասիլին, Բ. ջոթայ արարել : Էն վախառն Ղազվինըցիք շուտ նա-

53 Թաղաֆուլ սուլթան—ուղեցնել . խայաֆաթ—հեղութիւն այրայհար—առան . Խոռոմ դարայ—մի աւանի անուն է . խաւահար—ընդիմակացութիւն :

54 Զուր—ինչեւ . ջոթ—կտոր, ախրում—վերջումը . դոլդալ—կրիւ . խիալ—կարծիք . ջոտաթ—ջուրաթ . եկլլար—մէ բայ . խոուր—հետ . դաթայաթ—աչէկոծութիւն :

ղարին կը տան որ կռիւ առնն : Էս խաբարն որ Ամանօլայ խա-
նին կը խտանի՝ թէ Ղազվինցիք դօնմիշ ելան՝ որ ուզեն կը-
ռիվ առնն, Ամանօլայ խանըն Բ. սուլթանի յուրմ կառի՝ թէ
ձեր՝ ասկարօջն գնացէք՝ Ղազվինըցեքոյն հանդարտացուցէք :
Էս Բ. սուլթանն ուրէնց ասկարօջն գլնացէլան՝ որ Ղազվի-
նըցեքոյն հանդարտայնեն : Ատրեցել չեն Ղազվինըցոյ օջ-
տիցն դուս գօլն : Ախրուսն որ զօվդէն շատացել այ, Ամանօ-
լայ խանն անտել այ՝ որ էլ ճար չը կայ, յինքն էլ ուր ասկարօջն
ձիայովել այ՝ գլնացել այ՝ շատ Ղազվինըցի այ ջառթել և
փախցուցէլ այ ուրէնց տընէրը Ղազվինու Գ. մահէն թամամ
երէլ այ : Էս զալաբալըղումն քաղաքէն դուս կուսէն մին Ղը-
զըբաշի սուլթան ԱծԾ. զաջարօվ կը կոյ քաղաքն, Աղվանին
վերայ կը դընայ : Աղվանն էս խիալն կառի՝ թէ Ըսպալալարն
այ՝ որ ուր թամամ ասկարօջն եկէլ այ : Էն չալն Աղվանն յի-
րէս յեղ կը զնի՝ կը գոյ Շահին մէյդանն ուլայդափուն զմա-
նըն : Ղազվինըցիք ջուաթ ան բահամ արարել՝ ուրէնց դընե-
րէն դուս ան եկէլ Շահին մէյդանն : Աղվանն ջու ան արա-
րել, Աղվանն փախել այ Շահի անէրն : Աղվանն Շահին անէ-
րին մին կողմն որ խօլվաթ այ ելէլ՝ քանդէլան, դուս ան ե-
լէլ փախել ան դիրի Ըսպահան : Էս կռվումն Ամանօլայ
խանին մին դուլայ ան տիլ՝ որ յուսին այ եկէլ միջումն դու-
լէն մնացել այ, մեռել չէ : Էս կռվումն Ա. Բ. Զ. աղվան այ վեր
ընկել Աղվանի Աշըաֆ սուլթանն Ած. մարդօվ Ղազվինու էլ
Ըսպահան չէ դնացել փախել այ՝ գնացել Ղանդահար : Ամա-
նօլայ խանն Զծ. մարդօվ որ Ղազվինու փախել այ, եկէլ այ
հասել Արասանի, Գ. Բ. Ղըլըաշի ասկարի ըռաստ այ եկէլ եկ-
ջար Ղըլըաշին ասկարին վերայ եայ դընացել : Ղըլըաշն փա-
խէր : Էստոնց սանդուղիանէն և ինչ ունեցել ան՝ թամամին
Աղվանն կը զաջտի. խտուըն կը տանի դաբի Ըսպահան : Աղ-
վանըն որ Ղազվինու կը փախի, էստոնց թէ նազդ փող, թէ
աղբանք : Լ. Բ. թումանի դընի՝ որ Ղազվին կըմնայ, Ղազվինը-
ցիք կը զաջտեն. և Աղվանին դաջտայաթօվ կը դնան Ըսպա-
հան : Աղվանին ասկարին խտ Բ. Բ. Ղըլըաշ այ ելէլ, որ աս-
կարն Ախտամայ դօլվաթին ախպերըն այ ելէլ, որ Ղազ-
վին մնացել ան էս Ղըլըաշի Բ. Բ. մարթն ուրէնց մեծայորօջն :

55. Ամանօլայ խանն որ Ղազվինու Զձ. մարգով որ յետ կրդոյ, Քաշան կը խաանի՝ Քաշանըցիք քաղաքին դուռն կըմապրեն, քաղաքն չեն թողման. և քաղաքէն Ամանօլայ խանին վերայ թֆանգ կը գնեն և դարշու կառնն :

56. Ղազվինու խաքիաթն որ Մամուդ Շահն կը յիմանայ, որ ուր ասկարն կոտորվելայ, շատ դասփառայ դրնի Մամուդ Շահն, օրէն Բ. խեռ ձիայ ելել նման՝ քաղաքումն ման գլորման, թէ չնի՝ Ըսպահանըցիք էլ Ղազվինըցէքոյ պէս առնն Մամուդ Շահն Լօթվալի խան, Ղուլար աղասուն և թըվանկէն աղասուն ասացելայ՝ թէ ես ուզեմ ձեզ էլչու թիւնով աղարկեմ Շահզադէ կուշան՝ որ մին ղով եղրար դնէք մեր միջումն, ուզեմ՝ որ սանթանաթով գնէք և ինչ բէկլադայ որ ուզէ քեզ խեռ գոն տար. և Ղուլի բաշուն էլ յուբմայ արարել՝ թէ քոյ թաքինն բոլորի, որ գոն իմ ղարշվումն սան յանցկան : Ըսպահան որչանք բէկլադայ որ կէր Մամուդն որ Ըսպահան առել էր, էս բէկլադէքն ուրէնց դնէրիցն դուս չեն եկել : Էս էլչու թեան ձէնըն որ կը լսեն՝ թամամին դուս կը գան, որ Լօթվալի խանին խեռ գընան : Էստունք ուրէնց թաղարիքն կը առնեն : Մամուդ Շահ էս խաբօմն ինչ բէկլադէ որ ելելայ դուս այ բերել և Ղլլաշին ղլուին կապելայ՝ թէ ձեզ էլչու թիւնն ամ աղարկում Շահզադէ կուշան, որ ուրախանան խաթըջամ լինեն՝ թէ ղընաման անք թարվիզ Շահզադէ կուշան : Մամուդն էս Ֆանդէրն էնտուր այ արարել՝ թէ չնի Ղլլաշն էլ դօնիշ լինի :

Պիտի շարունակուի :

56 Նման—երրորդ դէմ է լինելը բայի վտխառակ ասկու ելնման, մի ղով և ղրար—մի ձեռ պայման. սանթանաթ—պատիւ, վառաւոր. ասն—զօրահանգէս, ղլուի կապել—խաբել :

ԱՍՐԻ-ԲԷԿ ԵՒ ԳԻՔԻ

ԵՐԵՒՈՅԹ Գ:

Տեսարանը ձեւացնում է Նախիջևան քաղաքի մէջն խանի պալատն, որոյ զանազան լուսամուտն բայ եւ մէջին նստած Բեպր-ալի խանն մեծամորուս, աչքերն կտրութեան համար կապած թաշկինակով, զալիանը ձեռքին եւ յուսամտի առաջին կանգնած շատ սպասաւորներ, ձեռքէնին զոտկունն:

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԿ, ՆՈՎՐՈՒԶ-ԱՂԷՆ, ՍԱՐԳԻՍԸ, ԲՈՒՆԵԱԹՆ

ԵՒ ԲԱՂԸՐ-ԲԷԿԸ:

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԿ	Ղափանի 2 տակին
Յանկարծ զլուր բարձրացնում է եւ	Անհաւատ Ասրի-
ականջնէրը սրում, էս էն կողմն ե-	Բէկըն եւ Գիքին
րեան դարձուցանելով:	Պատահել են մեր
Ի՞նչ աղաղակ է,	Սէրդ Հաշիմին
ԱԼԼ՛ճճ, ԱԼԼ՛ճճ՛ Է:	Ու Ներամեցի
ԲԱՂԸՐ-ԲԷԿԸ	Կարայ Կասումին.
Մեր Նախըրուանցի	Թըֆանդով մինին
Ուղղափառներն 1 Էն,	Թըրով էլ միւսին
Հաւաքուած զնում են՝	Խփել ըսպանել են.
Հայոց թաղելի	Հիմի նրանց լէշը
Վերայ թափւոտան.	Նախըրուան բերել՝
Ինչ ունեն չունեն,	Բազարն և են ձըգել .
Խըլեն կողոսրան,	Ուղղափառներըն
Ումն էլ պատահեն՝	Հէնց էս տեսել են
Խըփեն ըսպանեն .	Մեծ Մուշթէիդի 5
ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ	Մօտ ժողովել են՝
Ի՞նչ է պատահել,	Անցքը պատմել են՝
Ի՞նչ է անց կացել	Շարով 6 Բնչ պէտք է
ԲԱՂԸՐ-ԲԷԿԸ	Անեն, հարցրել են.
Երկու օր յառաջ	

1 Մուսուրման բառի տեղ գործածած ուղղափառ բառն. 2 Կասպան լեռն. 3 Դիակը. 4 Շուկայ. 5 Առաջին հոգեւորականը Շիայ մահմետականաց. 6 Հր-գեւորական օրէնքով:

Նա էլ ասել է՝
 Ղուրանն հըրամայէ
 Ըսողանողնէրին
 Պէտք է ըսականել,
 Կայքէրնին խըլիւ,
 Նրանց երեխայքը
 Կնանիք-որդիքը
 Բերել թուրքացնել՝
 Ուղղափառները
 Պատասխանել են.
 Անհաւատներն
 Ոչ Նախընտան են,
 Այ տուն տեղ ունին.
 Մեծ Մուշթէիղըն
 Պատասխանել է՝
 Սուրբ չարիաղըն
 Ձեզ պատուիրում է՝
 Հայերիցն պէտք է
 Հանէք վրէժը,
 Թէ ոչ Մահմեղը
 Նոցա արիւնը
 Ձեզանէ կուզէ.
 Ուստի թուրքէրը
 Գընում են շարի
 Կատարեն վճիռը :

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ

Ղալեանը տալիս է ծառային եւ ըս-
 կըսում միրուսը ցետել :

Ինչպէս առանց ինձ
 Իմացում տալոյ՝
 Համարձակվում են
 Էդ բանն անսկոյ,
 Ձըզիտեն Հայէրն
 Իմ ոչխարներն են,
 Որոց պէտք է ես

Արածացընեմ,
 Գիշատող գէլից
 Պահեմ պահպանեմ,
 Բուրթէրնին խուզեմ,
 Կաթէրնին կըթեմ,
 Ու մածուն մէրեմ 1,
 Պանիր եղ չինեմ.
 Թէ նիհարցընեմ
 Երբէք չըմորթեմ-
 Շուտ վազէ, ասան

Բաղըր քէկին :

Դու Ահսան-խանին 2
 Սարվազներ 3 տանէ,
 Ձըլնի Հայերին
 Ուղղափառներն
 Վնաս հասցընեն,
 Կամ նեղացընեն,
 Դու, Նովրուդ-աղն
 Շուտ արան, զընան
 Խօջայ-Սարգըսին 4
 Խօջայ Բունեաթին
 Դըտի, ուր լինին.
 Քանի մի մարդով
 Բեր էս բոպէին.
 Էնպէս արան որ,
 Նրանց ճանապարհին
 Ուղղափառները
 Մին վատ բան չանեն
 Նովրուդ-աղն եւ Բաղըր-քէկը
 Դուրս են գնում :

Մին զալեան բերեն,

Մին սուրսաւոր գնում է զալեանը
 բերել եւ ինքն ընչացքը ոլորում է,
 զըլեաղըր զլիսին թափ տալիս :

1 Մածուցանեմ. 2 Գնդապետ որդին Քեալը Ալի-խանի. 3 Հետեւակ զին-
 ւորներ. 4 Տիրութեան կամ պատուամուն որ տալիս են Հայ վաճառականաց :

Նշովք սասանին 1

Նըզովք եզկին,

Տէր իմ, ողորմեան,

Բաց 2 ի Աստուծոյ

Այլ Աստուած չըկայ

Մարգարէն նորա

է Մահամէղըն,

Հըղորըն Ալին,

Նրա փոխանորդն . . .

Մինչ եւ երբ էս Հայ

Ասրին ու Գիքին

Նեղացնելոց են

Ուղղափառներին .

Հը-երեսերնուդ

Ծառայիցն է տառա

Յայտնի ասում եմ,

Էս հաւատարիմ

Մին ծառայ չունիմ

Կէս խանութիւնս 3

Նրան կտայի, թէ՛

Անօրէններին

Բրոնել բերել էր,

Ողջ ողջ կենդանի

Երեւ հա տայի:

Մէկ հայում էք էս

Անկրօն Հայ ազգին

Որք չորս-հինգ հարիւր:

Տարուան միջոցին

Ոչ տէր ոչ իշխան՝

Թագաւոր չունին

Մնացած միշտ մեր մեծ:

Տէրութեան ձեռքին

Չարչարում տանջում

Նահատակում ենք,

Ինչ ունին չունին

Յափըշտակում ենք:

Երբեմն թէ նրանցից

Մէկն է յայտնըլում

Ուղղափառացըս

Դըժուար է լինում

Ջըսպել ձեռք բերել:

Տառ-քըսան տարում:

Թէ սրանք մին ազատ

Աղգ էին եղած,

Առաջնէրուն ինչ

Պէտք էինք արած:

Յայտնի համարձակ

Պէտք է որ ասած՝

Մեր նախնիքն ինչ

Վըշտեր են քաշած՝

Մինչ էս աստիճան

Սրանց են հասցըրած՝

Խոնարհացըրած՝

Ոչընչացըրած,

Հողի հաւատրած,

Ազատ հողիքըն

Նուատացըրած:

ՆՈՎՐԱՅԻՆ-ԱՂԵՆ

Ներսէ մտնում գլուխ տալիս, եւ
ղալեանը բեզում են խանին տայիս:

Մընասցէ ողջ մեր

Փառաւոր խանը

Կատարեցի ձեր

Բարձր հրամանը:

Սարգիսը եւ Բունեաթն գալիս են
կանգնում լուսամտի առաջեւն եւ
խոնարհութեամբ երկիր պաղանում:

1 Շիայ Մահմէդականները միշտ կընդունեն եզկին որպէս սասանին եզկին էր սպանող խմամ Հիւսէյնին, որ թոռն էր Մահմէդին: 2 Հանդանակ հաւատոյ Շիայ մահմէդականաց, հոքա ասեն Մահմէդն էր Մարգարէ Աստուծոյ եւ Ալին փոխարորդ Աստուծոյ: 3 Իշխանութիւնս:

ՔԵԱԼԻ ԱԼԻ-ԽԱՆԸ

Հը, Նովբուդ-աղայ,
Դուրսն ինչ լուր կայ:

ՆՈՎՐՈՒՋ-ԱՂԵՆ

Մինչև կը հասնէր
Քաջ Սարհանդ-խանը
Ու սարվազները—
Ուղղափառները
Քընացած էին
Հայերի թաղը,
Տաս տուն կողոպտած,
Ութըն մարդ մորթած:
Մինչ յիսուն հոգւոյ
Խիստ վիրաւորած:

ՔԵԱԼԻ ԱԼԻ-ԽԱՆԸ

Է՛հ, ուրեմն մեծ
Վընաս չէ եղած:

ԲԱՂԸՐ-ԲԵԿԸ

Ներս է գալիս, դուխ տալիս:

Եթէ Սարհանդը
Փոքր ինչ ուշանէր,
Երկու թաղըն էլ
Կողոպտած կըլէր:
Եւ վատըն այն էր,
Որ Սարվազները
Ուղղափառների
Հետ մասնակից էր՝
Մինչև Սարհանդըն
Էնտեղ կը հասնէր:

ՔԵԱԼԻ ԱԼԻ-ԽԱՆԸ

Աստ, սարհանդըն
Վերջըն ինչ արեց,
Ուղղափառներին
Հանդարտացըրէց:

ԲԱՂԸՐ-ԲԵԿԸ

Ջանադան խօսքով՝
Ու խոստումն քնէրով՝
Ուղղափառները
Էնդղանց հեռացան,
Բայց վատըն է այն,
Որ ձեր դըրանը
Ամբոխն ըսպասէ՝
Լըտն ինչ պէտք է
Հրամայէ խանը:

ՔԵԱԼԻ ԱԼԻ-ԽԱՆԸ

Մին ծառայ դըրկէ՝
Սարհանդին ասէ՝
Սարվաղի թիւը
Հստուարացընէ
Թող ժողովուրդը
Դըրանա ըսպասէ
Բաղըր-բէկը մին ծառայ է դըրում:
Հը, խօջա Բունեաթ
Ու խօջա Սարգիս,
Դուք ինչ էք ասում
Էս պատահմունքիս,
Ո՞նց հանդարտացնենք
Կատղած ամբոխիս:

ՍԱՐԳԻՍԸ

Երկիր-պագրում է զոպարով:

Ո՛վ ողորմած խան,
Հայոց պահապան
Միթէ էղպէս բան . . .

ԲՈՒՆԵԱԹՆ

Ամենակտնար՝ երկրպագութեամբ:

Ողորմած խանը
Ինքըն լաւ գիտէ՝
Ի՞նչպէսի հընարք
Դործ դընելու է:

Էդ թնչ մեր բան է,
Երբ նա մեր ազգի
Տերըն եղել է
Հիմի էլ նա է՝

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ

Ինձ լաւ յայտնի է,
Որ քոյ ասածըն
Սըրտից բըղխած է
Ու ճըշմարիտ է:
Բայց մըտածելըն՝
Հընարք զըտնելըն
Էսպէս ժամանակ
Ձեզ հարկաւոր է
Եւ իսկ ձեր պարտքն է
Որ ժողովուրդին
Հանդարտացընենք
Մին կերպով ցըրուենք:

ԲՈՒՆԵԱԹԸ

Հընարքըն էս է,
Խանըն հրամայէ,
Որ Ահսան խանը
Սարվազի թիւը
Ըստուարացընէ:

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ

Լաւ կարգադրութիւն,
Մըտածողութիւն,
Ես թնչ եմ հարցնում,
Դու թնչ ես ասում,
Ուղղափառների
Երկու արեանը՝
Ասա, ո՞վ պէտք է
Տայ պատասխանը:

ԲՈՒՆԵԱԹԸ

Ո՛վ որ եղած է

Մահուան պատճառը:

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ

Էդ մին պատճառ չէ
Դատաստանական, ¹
. կամ
Շարիադական,
Խորհուրդ եմ տալիս,
Առանց ըստիպման,
Ըննիք խոստովան,
Հայք են պարտական,
Որ ես կարենամ
Առանց նեղութեան,
Կամ հեղինակ արեան,
Վերջացընել բան.
Գիտէք որ սրանից
Ինչէր դուս կը դան,
Էսքան ժամանակ
Լըսած-տեսած էք
Էսպէս մին վատ բան:

ՍԱՐԳԻՄՆ

Մեր ողորմած խան,
Մեք ենք պարտական,
Էս, թնչպէս հրաման.
Միթէ մենք ներկայ
Էինք սպանման,
Կամ մասնակից էք
Ապիրատութեան:

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ

Ըստ որում սպանողք
Ձեզ հաւատակիցք,
Եւ մանաւանդ որ
Ձեզ քաղաքակիցք:

ԲՈՒՆԵԱԹԸ

Ի՞նչ քաղաքակիցք. . .

¹ Ուրֆան կամ շարէլէն, այսինքն աշխարհական կամ հողեւորական:

Որք քըսան տարուց
Աւել փախած են,
Յարակցութիւն մեղ
Հեղ երբէք չունեն,
Մեղանէ միմիւ
Թէ պատահում են,
Ինչ ունինք չունինք,
Յափըշտակում են,
Մեղ էլ սպանում են :

ՔԵԱԼԲ ԱԼԻԽԱՆԸ

Ինձ հարկաւոր չեն
Էտունք լըսելու,
Հայք պարտաւոր են
Ուղղափառներու
Արիւնի գինըն
Հատուցանելու,
Եւ քըսան մանըր
Երեխայք ջոկել,
Բերել մեղ յանձնել,
Աւ ի թուրքացնել
Փոքըր բան է մէկ
Սէիդ սպանել,
Ինչով պէտքէ նրա
Արիւնը քաւել :

ԲՈՒՆԵԱԹԸ

Ողորմած խան, էս
Մին ժամի միջին
Էնքան տուն տեղեր,
Որ դառտակեցին,
Էնքան Հայերին,
Որ ըսպանեցին,
Վիրաւորեցին,
Նըրանց արիւնը
Միթէ չքաւեցին
Կամ արեան գինը
Միթէ չհանեցին :

ՔԵԱԼԲ ԱԼԻԽԱՆԸ

Ղալեանը տալիս է ծառային, եւ աջ
ձեռքը տանում է կոյր աչքերին քը-
սում ու գտակն ծռում, կամաց կա-
մաց մտածելով ասում :
Դէ, կարող եմ ես
Էսպիսի օրը,
Էդ ժողովուրդի
Բիրանը փակել,
Ձեռքերը կապել,
Նըրանց հողիքը
Ու խըղճմտանքը
Ես հանդարտացնել,
Հա, էստով Հայքը
Իրանց մեղքերը,
Չէ, չըքաւեցին
Ասեմ պատճառը,
Ուղղափառները
Իրանց պարտքերը
Թէ կատարեցին
. . . . Բայց
Նըհատակելոց՝
Ազգականները,
Սուրբ շարիադով,
Ու իրաւունքով
Ըստ սուրբ հրամանի
Մեծ մարգարէի
Արիւնի գինը
Միշտ ձեռնից կառնեն,
Ա՛ Նովրուզ-ադա,
Հայք հրազանդել են,
Էլ կըհնազանդեն
Մեր հրամաններին,
Դոքա լաւ զիտեն,
Որ Հայոց ազգին
Ես միշտ պաշտպանող
Եղել եմ, կրնամ :

Ես հիմի դոցա
 Օգուտի համա
 Էսպէս եմ վճռում,
 Թէ Ասրուն, Գիքուն.
 Հայէրըն իրանք
 Բըռնեն ու բերեն
 Մեր ձեռքըն յանձնեն,
 Նըրանք կը կախուին
 Կամ թէ կը երվին,
 Քըսան երեխայք
 Թուրքանալուցըն
 Անշուշտ կազատվին,
 Ու նհատակելոց,
 Արիւնի զինը
 Իսպառ կըկորչին.
 Բայց որովհետեւ
 Գիքին ու Ասրին
 Փախըստական են,
 Վասնորոյ միայն
 Պէտք է զըրանք տան
 Քըսան երեխայն,

—ու

Վեց հազար թուման
 Մեռելոց արեան
 Գինը քառութեան.
 Բաց ի սըրանէ
 Մին հազար թուման—
 Խեղճ են, լնդ քիչ տան . . .
 Մեր Ահման խանի,
 Ու մեր ծառայից,
 Կամ սարվաղնէրի
 Վասըն նեղութեան,
 Է՛հ Նովբուղ աղան,
 Հիմի սըրանց հետ
 Հրումայեմ, զընա,

Հայերիցըն մա
 Դու էսքան գումար
 Ու քսան երեխայ,
 ՆՈՎԲՈՒՋ-ԱՂԷՆ

Աստծոյ Բասուլը 1
 Խանի աթուղ
 Միշտ հաստատ պահէ,
 Երկար կեանք չնորհէ,
 Որ խըղճմըտանքով
 Դատաստան կըտրէց,
 Կողմնապահութիւն
 Էստումը չարէց.

ՍԱՐԳԻՍԸ

Լաւ է բողորիս
 Խեղդել հրամայես,
 Քան թէ, Խան, էղպէս
 Դատաստան անես,
 Էղքան գումարը
 Տալըն, Հայերը
 Միթէ կարող են,
 Թէ կուղ նրանք ամէն,
 Իրանց աուն, կայքը,
 Գլուխը ծախեն.

ՆՈՎԲՈՒՋ ԱՂԷՆ

Հայք անխըղճմըտանք,
 Միթէ չըղիտենք
 Մտածում էք կարմնք
 Կարգ-կանոն զընենք
 Այսուհետ, օրըն
 Մին ուղղափառ միք
 Ըսպանենք արեան
 Գինըն էլ չըտանք.
 Սպանել կարող էք
 Արիւնի զինը

Տալըն ուղտմ չէք,
Սուրբ շարիադին
Հաւ հըպատակ էք:

ԲՈՒՆԵԱԹԸ

Ա՛ Նովրուզ-աղա,
Էդ թնչ խօսքեր ա
Ձեր յարգութիւնը
Էս օր խօսում ա,
Մէք եմք սպանող
Կամ

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ

Տես էս անօրէն
Անհաւատներին,
Որքան որ քաղցըր
Խօսաս հեղէրնին,
Անաչառ կըտրես
Դատաստանէրնին,
Էնքան կաւելցնեն
Լըրբութիւնէրնին—
Նովրուզ աղա, էս
Է իմ հըրամանքը,
Սոցանէ առնես
Քրան երկխայքը,
Ու հօթըն հաղար

Բայիջ թումանը,
Կամայ ակամայ
Մինչ երեք օրը,
Օգնական ահա,
Քեզ իմ ծառայքը,
Հարկը սարկաղի
Հեղ էլ Սարհանդը.
Ուղղափառներին
Ասան չըտպասեն
Դընան իւրեանց տուն
Ու հանդարտ կենան .

Նովրուզ-աղէն դուրս է դընում, ցըր-
վում ամբողջը, ու վերադառնում, զը-
լուխ տալիս կանգնում :

ՍԱՐԳԻՍԸ

Խան, ողորմացէք. . .

ԲՈՒՆԵԱԹԸ

Խան, մեզ խըղճացէք:

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ ծառայիցը.

Է՛յ, սըրանց քաչէք,
Էստղաց դուրս տարէք,
Հրամանս կատարէք:
Ծառայքը Հայերին դուրս են քա-
շում:

ԵՐԵՒՈՅԹ Դ.

Մին գաշտի մէջն կրակ վառած, ձիանքը վոքը ինչ հեռի կապած, իւրեանք
էլ կրակի չորս կարծը շարված նստած են

ԱՍՐԻ-ԲԵԿԸ, ԳԻՔԻՆ, ՍԱՅԻՆ, ՄՈՒԿՈՒԶԸ, ՎԱՆԻՆ ԵՒ ՎԱՆԷՍԸ.

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Էս Աղուկցիք,
Հինչ խեղճ մարդիկ ըն,

Կըռուի, վաստ գործի
Մէջ խառնըվող չըն,
Իւրանք էլ խիստ շատ

Աշխատաւորք ըն,
Տաբէրով դուրսը,
Պանդուխտ կը մընան,
Փող կը վաստակեն,
Կարողանալ չըն
Խեղճէրը բերեն
Իրանց ընտանեաց
Հետը, վայելեն.
Չես էլ խմանալ,
Հարըստութիւնը
Մեռնելուց յետը,
Որդիքն հիմն չկանեն:

ԳԻՔԻՆ

Մունչ Ղըղըլբայից ¹
Ռուսըն չէր առած
Գեանջէն, Շամախին
Բագուն ու Շուշին,
Թիֆլիզը, Նուխին,
Հէնց Ագուլեցիք
Հարըստանային,
Ղըղլար, Հաչտարխան,
Մոսկով կերթային
Կընիկ կառնէին.
Ընդի կ'մնային,
Փնռք Աստուծոյ հիմի
Մօտ է Ռուսաստուն,
Երբ ձեռք ըն բերում
Քիչ հարըստութիւն՝
Թողնում Պարսկաստուն,
Գընում բընակւում
Մօտ քաղաքներում:

ՍՍՅԻՆ

Լաւ է որ ղըրանք
Կըտրին մարդիկ չըն,

Թէ ոչ վեց օրվան
Համար մեղ էս քան
Փողը կըտային:

ԱՍՐԻ-ԲԵՆԸ

Նըրանց համար էս
Գումարն ոչինչ է,
Բայց մեղ ձըմնովան
Օրերումս չատ է,
Միթէ չնորհակալ
Չեն իրանց փողը,
Ողջութեամբ տարինք.
Հասցըրինք Գեղը ²
Ռուսնէրի հողը.
Ուր էլ կարող չի
Մօտ ղընալ գողը:

ԳԻՔԻՆ

Տաս քըսան տարի
Առաջ՝ չէք յիսում,
Որքանն էս ճամփում
Փող ին կորցնում:

ՄՈՒԿՈՒՅԸ

Մին կերպով հիմի
Նըրանց ծառէն ընք,
Որ նըրանց փողի
Տանող բերողն ընք:

ԳԻՔԻՆ

Տեմնում է մին ձիւտոր դէպ իւրեանց
Կողմէն է գալիս:

Էն ձիւտոր է.

ԱՍՐԻ-ԲԵՆԸ բարակ նայում է:

Հը, ձիւտոր է
Մէնակ մին մարդ է

¹ Պարսկիներէից. ² Գիւղ.

Հանապարհորդ է՝

ՎԱՏԻՇ

Հոգի գիտէ, հոգի է՝

Գեղըցւոյ նման է՝

ՄՈՒԿՈՒԶԸ

Գայ տեսնենք հոգի է

ՍԱՅԻՇ

Կերպարանքիցը՝

Հանաչս զալիս է՝

Հէնց գիտենաս թէ՝

Փրոշակիթցի է՝

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

ցճանապարհորդն, որ մօտացել էր՝

Ա՛տղայ, մօտ արի,

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ մտեցած.

Ապէր հրամայի.

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Հինչ տղաց ըս զու գեամ 1

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Մօտ շէնիցս 2 ըմ գեամ . . .

Բարի ջըղում 3 ձեզ

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Աստծու բարին քեզ.

Անունըդ հինչ ա,

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Վանէս 4 քոյ ծանայ.

Օհ հոնց չոր ցօրս ա,

Ձեռ ոտս սառալ ա . . .

Զիտը լիջանում է, մօտանում կըս-
կին, ձեռը ոտը տաքացնում, փոքր
ինչ սպասում եւ յետոյ

Ա՛ ես ձեզ մատաղ,

Իա դուք վախում չըք

Ըտի միամիտ

Ըստեղ նըստալ ըք.

ԳԻՔԻՇ

Հէր պիտում վախել.

Բճ, հիշէ ա ելել.

ՎԱՏԵՍԸ ծանր ու բարակ.

Հինչ պիտէր ընէր

Խեղճ Նախըւանցի

Գրխտոնեայ Հայեր . . .

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Տղայ, ասա հինչ կայ

Հինչ պըտահել ա.

ՎԱՏԵՍԸ

Հը-ասեմ լըհա

Հինչ պըտահել ա . . .

Մին 5 օրս կիրակին՝

Ասրին ու Գիքին

Մին Ագուլեցի

Հայ հեաէրնէրնին,

Տանում ըն ընում

Փողով Ռուսաստան,

Սէիդ-Հաչիւրին,

Կարա 6 կասումին

Խանի գողերին,

Որ տեղ միմեանց ըն

Ես լաւ չեմ գիտում.

Յանկարծ պըտահում,

Կըսիւ ըն անում

Մովը գիշերում,

Հայէրն տալիս ըն

1 Ինչ տեղացի ես գայիս. դամ բառը նրանք գեամ են անտասանում. 2 Շէն նշանակում է գիւղ. 3 Յաջողում. 4 Յովհաննէս. 5 Այսինքն, ուրիշ օր առաջ կամ անցեալ էս օրս. 6 Սիւ.

Նըրանց տպանում,
 Հանդիներին փռնում
 Ու Ատուած յիշում,
 Թողնում ու ղընում:
 Սըտակածնէրի 1
 Միւս ընկերները,
 Երկու օր յառաջ,
 Նըրանց լէշէրը 2
 Վեր էին առալ
 Նախշուան բերալ,
 Անհաւատները
 Հէնց որ էս տեսան
 Կէս ժամումը մին
 Տեղ հըլաքօցան,
 Գնացին Հայերի
 Թաղէրը մըտան,
 Տընէր քանդեցին,
 Ինչ որ կար մէջին,
 Յափըշտակեցին,
 Մռնչ 3 ութը հողի
 Հայ ըսպանեցին,
 Քառսուն յիսուն մարդ
 Վիրաւորեցին

ԱՍՐԻ ԲԵՆԸ

Է՛հ, ասան յետոյ
 Հայերն հինչ ըրին:

ՎԱՆԵՍԸ

ԲՕ. հըլա 4 լըսէք . . .
 Հայերն հինչ ըրին . . .
 Հինչ պիտի նէին.
 Ողորմելիքը
 Թուր թփանգ չոռնէին,
 Կըռիւ ընէին,

Իրանց պահէին,
 Քսան երսուն հազար
 Թուրքէրի ապշին,
 Չորս հարիւր տունը
 Նի՛ 5 զալ կարէին.
 Եաշէլ 6 կարձաւ էր
 Մարդոյ աչքէրը,
 Երբ—դերմակ 7 տղէրքը
 Ու աղջըկէրքը,
 Փափուկ հարսները,
 Պառաւ կնանիքը,
 Հանից դուրս փախած
 Կտուրների երայ
 Էին ժողովւած.
 Աղաչանք ու կոծ,
 Աղաղակ ու լաց
 Նըրանց յոյս էր դնում 8
 Էս միջոցումը
 Սարգսին Բինեաթին,
 Քեալը ալի խանի
 Մօտը տարեցին,
 Որ հրամայել էր,
 Ասրուն ու Գիքուն
 Չը բըռնէին մօռնչ
 Տասն օր՝ բերէին,
 Իրան չըտային,
 Քսան Հայ հրէխայք
 Պիտում տանէին,
 Թուրքացընէին.
 Ու օխաղ հազար
 Թուման, Հայերիցն
 Ուժուլ տռնէին,
 Էս գլուխը քարը
 Հէնց որ էս լուրը

1 Մահմուտականաց մեռեալ չեն առել. 2 Դիակներն. 3 Մինչեւ. 4 Դեռ եւս. 5 Դէմ յանդիման. կանգնել, կամ հարկանել. 6 Նայել. 7 Մանր. 8 Դառած, եղած:

Հասաւ չէնէրը,
Ընտեղ թուրքէրը
Ըրին վատթարը,
Ըսպանում էին
Ույտիւր շտակում
Շընցի¹ Հայերը²
Ես էլ վախիցըս
Էրէկ եմ վախած
Նախիջհեանում
Մինակ դուրս եկած,
Սարէ սար ընկած
Մհիկ³ տեղըս հասած :

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Ասան, զո՞րդ սասում :

ՎԱՆԵՍԸ

Բժ, սուտ ըմ տսում . . .
Նախչլանու գեամ չըմ³ . . .
Աչուք⁴ տեսած չըմ . . .
Հինչ որ ասում ըմ :

ԳԻՔԻՆ

Ասան, էն Աստուծ :

ՎԱՆԵՍԸ

Էն Գրիստուս Աստուծ,
Գիքին ախ է քաշում :

Հինչ պիտում հիսի,
Ասրի-բէկ արած

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Աչքէրը արտասուքը լիքը :

Մեր խեղճ Հայերին
Թուրքէրի ձեռքին
Պիտում⁵ չը թողած . . . :

ԳԻՔԻՆ

Պիտում չը թողած . . .
Բան հինչպէս արած :

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Գիքի, անցածը
Դէ, անց է կացած,
Ըսպանվողները,
Պըլովածները,
Համ ըսպանուած ըն,
Համ էլ պըլոված,
Ուրեմըն պէտք է
Մեզ ապագայի
Համար մըտածած
Խեղճ երեխանցը
Հնարքով աղատած
Մեզ նըրանց զոհած :

ԳԻՔԻՆ

Մեզ նըրանց զոհած,
Մտածած ըս խօսում
Թէ անմըտածած . . .
Հինչպէս աղատած :

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Գիքի, ինձ լսէ,
Քըսան երեխան
Կը թուրքացընեն,
Օխտ հազար թուման
Փողըն էլ կառնեն,
Քաւ լիցի էտով
Եթէ հանգարտվեն,
Ամէն օր մին սուտ
Պատճառ կը բերեն,
Խեղճ մեր Հայերին
Միշտ կնեղացընեն :

1 Դիւղացի. 2 Հիմի, հիմիկ, 3 Գալիս չեմ. 4 Աչօք. 5 Պէտք է :

Ուրեմըն Գիքի,
Ե՛կ մին բան անենք,
Մեք էլ ձիերնիս
Հեծնենք, ու քըչենք.
Գնանք հէնց խանի
Դըռանը իջնենք,
Ասենք, խան, նըրանց
Մեք ընք ըսպանաւ,
Ու մեր օտքովը
Դուռըդ ընք եկաւ,
Որ մեր արիւնով
Էդ խեղճ Հայերին,
Քեզնից աղատենք,
Մեզ ինչ կերպ պատժով,
Պատժել տալու ըս,
Տո՛ւր, մենք պատրաստ ընք .

ՍԱՅԻՆ

Նայում է ընկերներին երեսին, զու-
խը շարժում:
Պատիժ, հինչ պատիժ,
Կայ պատրաստ դահիժ
Խակոյն կըսպանեն .

ԱՍՐԻ-ԲԵՎԸ

Մեք էլ զընում ընք,
Որ մեզ ըսպանեն.
Ու խեղճ. . .

ՎԱՆԻՆ ԲԱՐԿԱՆԱԿՈՎ ՎԱՆԷՍԻՆ

Ա՛ կոտիկ, էդ հինչ
Սեւ համբաւ բերար՝
Էս օր մեզ համար,
Հո՛ւրդից սըտանի 1
Նըման դուրս եկար .

ՎԱՆԷՍԸ ԴՈՂՂՈՂԱԿՈՎ ԿԵԼՈՒՐ
Սուրբ Սարգսի աջը,

Տաթևի խաչը,
Ինչ որ . . օր ինչը . . .

ՄՈՒԿՈՒԶԸ

Դէ, խեղճ Մուկուչը
Իրաւունք ունի,
Կօտրէ սրա զունչը:

ԱՍՐԻ-ԲԵՎԸ

Հինչ մեղաւոր է
Էդում էդ խեղճը:

ԳԻՔԻՆ

Ձեզ մատաղ խօխէք,
Էդունք թո՛ղ տուէք,
Խըրիկ 2 համբերէք
Խօսենք ու լսենք,
Որըն որ լաւ է,
Էնպէս կատարենք:

ԱՍՐԻ-ԲԵՎԸ ԿԱՆՉՆՈՒՄ Է.

Հինչ խօսենք—լըսենք
Խօսքէրնիս խօսք է
Եր 3 կաց ձի նիւնենք.

ԳԻՔԻՆ ԿԱՆՉՆՈՒՄ Է.

Դէ—էր կաց, նիւնենք
Ճանապարհ ընկնենք .

ՍԱՅԻՆ

Ասրի-բէկի եւ Մուկուչը Գիքու ձեռ-
քիցն են բռնում, նստացնեն:

Հո՛ւր էք դուք զնում
Մեզ ըստի 4 թողնում
Մեզ հէր չէք տանում. . .
Ձեզանէ երբէք,
Հեռացող չընք մեք .

1 Որ տեղաց սատանի. 2 Փոքր ինչ. 3 Վեր կաց ձի հեծնենք. 4 Էստեղ:

ՄՈՒՆՈՒԶԸ լալով :

Դէ՛, առանց ձեզ՝ մեք
Երկու օր կարանք
Գըլխէրնիս պահենք :

ՎԱՆԻՆ լալով :

Ձեզնից յետ պընանք
Մեք ջուրը թափվենք.
Ո՛չ հէր, ո՛չ ախպէր,
Ո՛չ կըշիկ, ո՛չ մէր,
Մունչ էս օր գիտենք,
Մըհիկ հօւր զընանք,
Հումին հի՛նչ ասենք :

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Ա՛ իմ ախպէրնէր,
Մէլք վանէսը
Երբ որ մեռնում էր,
Գիքին ամէնիս
Երա՛ որ ծեր էր՝
Մեզ էս ասում էր,
Թէ հօրէս¹ յետնէն,
Տղէրք, աշխարքումս
Էւ չենք կարալու
Գըլուխ պահելու,
Կամ պիտի ցըրվինք,
Ամէն մինրս մին
Տեղ, ջուկ ջուկ մնանք,
Կամ էսպէս դատաւ²
Միասին փախչենք,
Ոտանցոց երկրում
Մին տեղ ծածկըվինք,
Դեղերում ապրենք,
Մշակութիւն անենք,
Գըլխէրնիս պահենք,
Ընդ հալածակըն,

Երբ որ Մէլքըն

Հողին աւանդեց,
Միմեանցհետ սիրով
Կենաք մեզ հրամեց
Ու խձ իրան տեղ
Փոխընշանակեց,
Վասն որոյ մեք է
Մեր մէջը, էնպէս
Կառավարվալ ընք,
Որ մինչի էս օր
Նըրա անունը՝
Փառքով պահալ ընք,
(Չեմ ուզում ասել
Սորա պատճառը
Էս կառավարը)
Հիմի, ընկերնէր,
Ականջ զըրէք մեզ . . .
Մեր կըտակն էս է
Այսուհետեւ ձեզ
Երդում ենք տալիս
Էն ազու հացը,
Մին տեղ կերածը,
Մեր կենաց մէջը,
Մէկը մէկու հետ
Մըմաք միարան,
Ամէն ժամանակ,
Յամէն պատահման,
Հայոց խեղճերին
Ընիք օգնական,
. թէ
Վըճըռված մեզ չէ,
Վերքստին դառնալ,
Մեր ճակտին զրած է
Նախչումն մընալ,
Էն ժամանակը

¹ Այսուհետեւ, օրէս յետ էն. ² Թմբով :

Մեր զերեզմանը
Կը ուրախանայ,
Երբ ձեր զրլուխը
Մեր ազգին մատակ
Կանէք անխընայ :

ԳԻՔԻՆ

Իսկ իմ կըտակը
Ձեզ էս է, ախպէրք,
Հինգ հոգւոց աւել
Ձընիք դուք երբէք,
Թէ շատուր ընիք,
Ձեր մէջ կը ծագի
Տարածախալութիւն
Եւ ձեր սուրբ սէրը
Կը երկպառակի :

ՍԱՅԻՆ

Եւ միտնելը լաւով, աչքերնին սըր-
բելով :

Մեր զլիւի տէրէր,
Դուք միշտ էս օր
Ելած էք մեզ հէր,
Եւ ոչ թէ ընկեր,
Կամ թէ ախպերներ,
Ըտէնց խօսքերի
Կամ կըտակների
Ժամանակըն էր,
Դուք որ զընում էք
Մեզի թողնում էք,
Որբ, անհէր, անաէր,
Ինչ կողէք ասէք,
Ձեզանից երբէք
Հեռացող չենք մեք :
Մուկուչ, Վանի հէր

Կանգնած լացում ըք
Մին բէն խօսում չըք :

ՄՈՒԿՈՒԶՐ ՀԵԿԵԿԱԼՈՎ,

Մուկուչն մեռնէր
Փրըս չըտեսներ
Բն, թէ . . .

ԳԻՔԻՆ

Այսուհետ, որդիք,
Մեզ համար կրբէք
Դուք մի մտածէք,
Մեր յիշատակը
Դուք անմահ պահէք,
Մեր հոգւոյ համար
Աղօթք արեցէք . . .
Է՛հ, բարով կացէք
Լիւիդ¹ պըշպուրեմ,
Աղբէրք, մօտ եկէք,
Ինքն է մօտանում նոցա համբուրում:

ԱՍՐԻ-ԲԷԿԸ

Մօտանում է նոցա համբուրում, նը-
րանք էլ Ասրի-բէկի ձեռքն են պա-
շում:

Մնացէք բարւով,
Միմեանց հետ սիրով
Միարան կացէք,
Ինչ կըտակեցինք
ձիշղ կատարեցէք,
Սուրբ Կարապետ ձեզ
Օգնական ընի.
Տաթև վանքը,
Մարասու աջը,
Լիւիդ հովանի,
Սայի իմ թուրը

¹ Ամենգիւղ պապանեմ:

Թըֆանդըս ու ձիս,
Ա՛ռ, քեզ եմ տալիս.
Այսուհետ որքան
Կենդանի ընիս,
Սըրանք քո մօտը
Յիշատակ պահես
Ու մեզ միշտ յիշես
Ողորմի ասես.
Որովհետեւ դու
Ինձ փոխանորդ ես,
Ոնց ես ձեզ, դու էլ
Սրանց կառավարես.
Երկու ընկեր որ
Մօտդ պիտի բերես
Մեր կըտակներն էլ
Նըրանց հաղորդես.

ՎԱՆԵՍՐ

Որմինչեւ էն ժամանակը ապշած քա-
րացած կանգնած էր, հիմի սկսում է
լալով ասել:

Բէկ, քո անունը
Շատ էի լըսալ,
Յանուն Հօր վկայ,
Յանկանում էի
Երեսըդ տեսնալ,
Փառք Աստծոյ, հիմի
Որ պըտահեցայ 1
Լոյս տեսութիւնիդ
Ես արժանացայ,
Սըրտումըս էլ ցաւ.
Ձի պիտի մընայ.
Խընդրում եմ զընես
Ձեռքդ զլիսիս ըսայ,
Ու օրհնէիքըդ տաս

Ինձ երկու հողոյ
Մինի տեղ կարգես.
Եշի 2 տես թուրըս
Թըֆանդըս ու ձիս,
Հանդարտ, միամիտ
Մընալ կարող ըս
Տղամարդութիւնիս.
Հէնց էս բոպէիս
Դըրեցի մըտքիս
Ծառայ ըլնեմ ես
Էս կըտրիճներիս
Ու զլուսըս զընեմ
Էս քաջ մարդկերանց
Սուրբ ճանապարհին,
Որք աշխատում ըն
Օգնել մեր աղղին
Խեղճ թըշուառներին
Ընկնում է Ասրի-բէկի ոտքերը:

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Կանգնացնում է եւ ձեռքերը դնում
ղլխին վերայ:

Ըվանէս ծըլիս
Ջօրանաս, ապրիս
Որ տի 3 ազգասէր
Սիրտ հոգի ունիս.
Եթէ կը սիրես
Սըրանց ու ազգիդ,
Դըլախտը կերթայ
Անպատճառ հողիդ.
Դէ քեզ այսուհետ
Օգնական ըլնի
Մեր սուրբ Կարասիւն.
Սալի ահա քեզ
Քաջասիրտ ընկեր,

1 Պատահեցայ. 2 Նայիր. 3 Տի այսինքն ըտի, էղպիտի:

Որդի կամ աղպէր :

Սայի, թըֆանդ թուրդ

Տճւր հետըս տանեմ :

Սային լալով ձեռքն պաշում է եւ
տալիս :

Վանի, գնա Սայու :

Ձին բեր ես նըստեմ :

Վանին լալով գնում է բերում :

Դէ, Գիքի-ապէր,

Գընանք, կէս օր է

ճանապարհներըս

Խիստ շատ հեռու է :

Գիքին լալով :

Դէ մընաք բարւով

Դըրախտունն Աստծով

Միմեանց կը տեսնենք

Ուրախութիւնով :

ԱՍՅԻՆ

Ըստ որում հաստատ

Գնալն վըճուցիք,

Ձեռքէնիդ կրկին

Տճւէք համբուրենք,

Մեր փոքրութիւնը

Դարձեալ հաստատենք :

Եթէ ողջ եկաք՝

Էլի ձեր փոքրն ենք,

Բայց Աստուած չանէ

Ձեզ վատ բան ընի,

Միամիտ զընացէք,

Մինին հարիւրով

Թուրքէրից կառնենք :

ԱՍՐԻ ԲԵԿԸ

Հպարտ կերպարանքով :

Դէ Մուկուչ, Վանի,

Բարւով դուք մընաք :

Մեր կըտակները

Երբէք չմոռանաք :

Սայի-բեկին էլ

Հընազանք կենաք :

Նստում է ձին, Գիքին էլ նրան է

հետեւում, միաները լալով կրկին կը-

կին համբուրում են գնացողաց ձեռ-

քերը եւ նոքա էլ նրանց երեսները :

ԵՐԵՒՈՅԹ Ե.

Նախիջևան քաղաքումն, մեծ հրապարակի վերայ խանի պալատն, որոյ մեծ զուտամուտն նայում է հրապարակին : Խանը լուսամուտն բազմած, դաւեա-
նը ձեռքին եւ շատ ծառայք առաջին կանգնած : Մին Հայի, Սոսիփան անուն,
փալախիկն ձգած, դահլիճներն չարաչար ծեծում են եւ քսանաչափ Հայերի էլ
վզէրնուն շղթայ եւ ոտներուն կոճղ, կանդնացրել են, որ ծեծեն վալախով,
չորս հինգ հողի Հայեր էլ ծեծ կերած, ստնէրնին արկնուտ, մղկտալուցն միւս
կողմունն նստած լաց են ընում : Շատ Մահմէտականաց խումդութ մինչքոր
բազմութիւնը ժողովված—ոմանք գոչում են ծեծն սատկացնել—ոմանք դալիս
են Հայերի երեսներնուն թքում, հաւատ, օրէնք ուշունց տալով—ոմանք դաշոյ-
նէրնին հանում են Հայերի վերայ երկարացնում սպանել, բայց դահլիճներն թող
չեն տալիս—ոմանք ապտտկում են եւ ք շղթով խալում : Նաղարայ—զուռնայ վը-
ջողներն Հայ աղից, կանգնած են հրապարակի մին կողմի կողքի վերայ վը-
ջում :

Յոնկարծ Ասրի-բէկը եւ Գիւքին ձիաորոված եւ դրահաւորոված հրաշարակի արեւմտեան կողմիցն դուրս են դալիս: Մահմետականներն զարմանալով նայում են—նայում են եւ յետոյ ճանաչում—սկսում են հէյ, հէյ, Ասրի—բէկն է, առեւելով փախչել եւ աներեւութանալ: Խանի ծառայքն եւ զահիճներն եւս թողնում են Հայ կալանատններին էնպէս ինչպէս կան եւ փախչում:

ՆՆԻԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՔԵԱԼԲ ԱԼԻ—ԽԱՆԸ, ՍՅՖԱՆԸ, ԱՍՐԻ—ԲԵԿԸ, ԲԱՂԸՐ—ԲԵԿԸ, ՆՈՒՂ-

ԲՈՒՋ—ԱՂԵՆ, ԳԻՔԻՆ, ՍԷԻԳ—ԱԼԻՆ, ՄՈՒԶԹԷԻԴԵՆ:

ՔԵԱԼԲ ԱԼԻ—ԽԱՆԸ

Երեսն այս այն կողմն է շրջում, ահով դողով, զղում է որ մին վատ պատահուճք կայ, բայց ինչ լինեն չի կարողանում խմանալ, կցկտոր ծառայիցն է ձայնում:

Էյի, պոռնկորդիք 2

Հէրինիդ 2 երված,

Ինչ է, ինչ եղաք,

Հէր էք մընջալած,

Հեռալաք զնայիք

Ուր զիւսնալած

դքան ծառայքըդ

Միտին յանկարծ:

Կանդնում է կոյր կոյր պատերը բըռնելով քայլում:

Նուրի, Ֆաղլալի

Գիւլ-մաման, վայի

Բաղըր, Ալի ըղն

Իբրահիմ, Մուսայ,

Տէր իմ ողորմեն.

Ա. Նուրուդ-աղն. . . .

Էյի ծեծ ուտող Հայ.

Դու զոն է ասան,

Ինչ եղաւ, ինչ կայ:

Պատէսրաւ հասնում է մին դրան մօտ:

ՍՅՖԱՆԸ ոտները փախախտմը

Ասիւ թէ ինչ կայ . . .

Ողջ լինի խանը

Հայոյ պաշտպանը,

Ասրին ու Գիւքին

Հեծած իրանց ձին,

Թըֆանդ ուսերնուն,

Թըրէր մէջքէրնուն

Կապած, հրէս եկան. . .

Ծառայք հէնց տեսան,

Ամէնն էլ փախան,

ՔԵԱԼԲ ԱԼԻ—ԽԱՆԸ

Մտած մին դրան մէջը

Փախան. . .

Միթէ էստեղ մին

Ծառայ էլ չմնաց.

ՍՅՖԱՆԸ

Դեւ էլ չըմընաց

ԱՍՐԻ ԲԵԿԸ

Գիւքու հետ հասնում է լուսամտի առջեւն, կանդնում ձիով.

1 Ստոր-կան բոս Պարսից մեծամեծայ բերանում. 2 Պարսկերէն փկղեր-ստիքի:

Խան, մի վախենար,
 Հո՛ւր ես գու վախչում,
 Եկած ենք դուռդ,
 Էլ հո՛ւր ես դընում,
 Քոյ խըղճմըտանքը,
 Քոյ խաւունքը
 Հաւատ օրէնքը,
 Հրամայում է մեզ
 Էպէս ողջ թողնես,
 Ու անմեղներիս

Ձեռքը դէպ ի կալանաւորներն.

Էդպէս պատիժես :
 Սրանք սպանած չեն,
 Մեր կըռվումըն էլ
 Երբէք եղած չեն,
 Մեզ էլ տեսած չեն :
 Մեք սպանողներըս
 Մեր թըփանդները
 Ձըղած մեր ուտը,
 Թափանջայ թուրը
 Մեր մէջքերումը,
 Ուղիղ եկած ենք
 Խանութեանդ սպասը :
 Ձխմանաս որ մեք
 Էնպէս կարծել ենք,
 Թէ մեզ բռնել տալըն
 Դուք կարող էիք :
 Ահու եկել ենք :
 Էդ քաւ, մի լիցի,
 Ընկելու բան չի
 Բայց մեք լըսել ենք,
 Օխտ հազար թուման
 Արիւնի գինը,
 Առնուել Հայերից
 Տուել ես հըրաման,
 Նըրա համար էլ

Ծեծում ես սըրանց,
 Յայտնի է՝ տէր ես
 Քոյ ժողովրդեան՝
 Սրանց ամէն բանի
 Եւ հաղթութեան,
 Կարող ես առնուլ
 Սըրանցից՝ որքան
 Տալիս է կամքդ
 Անկախ անասման :
 Մէկ էլ, Հայերից

Տուած ես հրաման
 Առնուլ անպատճառ
 Երկխայք քըսան,
 Որոնք որ պէտք է
 Իբր թուրքանան,
 Սա է մին հըրաման,
 Վըճիւ անարդար
 Տիրապետողի
 Անդէպ անյարմար :
 Խան, յետ տեղդ արի՛,
 Համեցէք նըստի,
 Էս դատաստանը
 Նոր հողուլ կըտրի,
 Ինչպէս մին արդար
 Խանի պատկանի :

ՔԵԱԼԵ ԱԼԻ-ԽԱՆԸ

Ասրի-բէ՛՛, էտունք
 Դատարկ խօսքեր են
 Ի՛նչպէս հաւատալ
 Ձեզ կարելի է
 Երբ զրահները
 Վըրէրնէրնուսդ է :

ԱՍՐԻ ԲԷ՛՛ԿԸ

Իջանում է ձիուցը, Գիքին էլ նրա
 նման, զրահները հանում են ու ձը-
 դում սենեակի մէջը լուսամուկիցը :

Դէն ձրդինք ահա . . .
Թուր, թփանդ, թափանչայ. . .
Գոնէ մին ծառայ
Էստեղ էլ չը կայ
Վեր առնէ բերէ
Իւր ձեռքով քեզ տայ
Հողիդ միամտանայ :

ՍՏԵՓԱՆԸ ՎԱՐԽԻԼԻՅԸ

Հրէն¹ մին ծառայ
Հեռի կանգնած ա,
Եւ մեզ նայում ա,
Կամենաք ձեռքով
Անամ, էստեղ գնայ :

ՔԵՍԱԼԻ ԱԼԻԻՍԱՆԸ

Էստեղ գնայ . . .
Հայ ձեռքով արան .
Շուտով էստեղ գնայ,
Ստեփանը ձեռքով է անում, ծառայն
գալիս է :

ԱՍՐԻ ԲԵԿԸ ԾԺԱՌԱՅԻՆ

Այլ տղայ, վեր առ
Էդ զրահները
Տնւր, դիր, ինչ տեղ որ
Հըրամայէ խանը,
Ծառայն տանում է զրահները դնում
միւս սենեակումն, վերադառնում :

ՔԵՍԱԼԻ ԱԼԻԻՍԱՆԸ

Ո՞ր ծառայս ես դու,
Անունըդ շուտ տո՛ւ :

ԾԱՌԱՅԻՆ

Ես եմ Բաղրը
Ոտիդ մոխիրը³

ՔԵՍԱԼԻ ԱԼԻԻՍԱՆԸ

Բն Նովրուդ-աղէն,
Կամ միւսներն ուր են :

ԲԱՂՐ,

Էստեղ կանգնած են :

ՔԵՍԱԼԻ ԱԼԻԻՍԱՆԸ

Էստեղ կանգնած են

Ասան էստեղ գան

Ջրահներն ինչ արին :

Բաղրն ձեռքով զլխով նշանացի է
անում, Նովրուդ-աղէն, Ալի-բէկը ե
քանի մի ծառայք զայիս են : Ասրի
— բէկը լուսամտիցը ներս է գնում,
Խանի ձեռքիցը բռնում, բերում սե-
ղումն նստացնում :

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Կողպած տեղ դրլին

Խան, հէր ձեռքէրըդ

Էղպէս գողում են :

Հրամայէ⁴ խանը

Մին զալեան բերեն :

Բաղրն գնում է զալեանը բերում,
տալիս է Խանի ձեռքը, որ գողո-
ղալով տանում է բերանը քաշում,
միրութիւն ցատկով :

ՔԵՍԱԼԻ ԱԼԻԻՍԱՆԸ

Նըղո՛ւք սատանին

Նըղո՛ւք Եղիբին

Տէր, դու ողորմեան

Քոյ խեղճ ծառային

Բայ⁵ ի Աստուծոյ

Այլ Աստուած չը կայ,

Մարգարէն նորա

1 Էն է, ահա. 2 Տնւր, 3 Ոտիդ տակի հողը, փոշին, մոխիրը. 4 Պարսկց մէ-
ջն մեծամեծաց ասալին նոցա համար երրորդ դէմն կիսովն. 5 Լա իլալահիլա—
Մուհամադը Բասուլ Ալլահ, Ալի Վալիսուլլահ :

Մահամեղըն,
Հըղօրըն Ալին
Նրա փոխանորդըն . . .
Է՛՛հ հիմի ասէք,
Գիքի՛, Ասրի-բէկ
Տեսնեմ ինչ մըտօք
Դուռս եկել էք:

ԱՍՐԻ-ԲԷԿԸ
Ուղիղ քոյ դուռը,
Խան, մեք եկած ենք
Էս խեղճ Հայերին
Քեզնից աղատենք,
Եւ էլ թող չըտանք
Քըսան երեխայք
Դուք թուրքացընէք:
Մեզ խեղդել տուէք,
Մարդասպան մեք ենք:

ՔԵԱԼԻՔ ԱԼԻ-ԽԱՆԸ
Լաւ հասկանում եմ
Ինչ որ ասում էք . . .
Բայց ամիստում եմ,
Խիստ էլ ցաւում եմ,
Որ ես կարող չեմ
Երկու արիւնը
Էս օր ձեզ բախչեմ,
Միամիտ եմ, թէ
Ձեզ չըսպանել տամ,
Կամ թէ չերել տամ,
Ուղղափառներին
Հանդարտացընել
Կարողանալ չեմ:
Ա՛ Նուրուղ-աղա,
Էսպէս չէ՛, ասն,
ՆՈՎՐՈՒՋ-ԱՂԷՆ աշն ցրւած.
Էստեղ եմ ահան,

Քո խոնարհ ծառ ոյ,
Խան, հըրաման աբան.

ՔԵԱԼԻՔ ԱԼԻ-ԽԱՆԸ
Միթէ չեա լըսում
Սրանք ինչ են ասում:

ՆՈՎՐՈՒՋ-ԱՂԷՆ
Ուղղափառների
Արինն 1 կապած է՝
Էս անկրօնների
Խելքը աչքերը,
Իրանց զրահները
Իրանց ձեռքերը
Բերած յանձնած են
Քոյ խանութիւնին.
Մատաղ եկած են
Ղենն ոտիդ տակի
Փոշոյն ու հողին:

ԱՍՐԻ-ԲԷԿԸ
Հարկաւորութիւն
Հիմի դու չունիս.
Էսպէս մարդկանցից
Խորհուրդ հարցանես,
Թէ հետեւող ես
Ձեր Մարդարէին,
Արիւն արիւնին
Է ըստ Ղաւրանին,
Դէ՛, մեզ թող պատմեն,
Հայերն աղատվեն

ՆՈՎՐՈՒՋ-ԱՂԷՆ
Նայեցէք սըրանց
Լըրբութիւններին
Էս աստիճանին՝
Իրանց ներում են,
Խօսել առաջի

Ձեր խանութիւնն :

ԳԻՔԻՆ

Էստեղ եկած ենք,
Ձեզանէ խնդրենք
Միայն իրաւունք,
Հիմի մեք անզէն
Դատարկ մարդիկ ենք,
Ինչ կուզէք ասէք,
Մեք ոչեւք է լըսենք,
Ու հնազանդէ՛նք:

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Քեզ, Նովրոգ-աղայ,
Խանի մօտ խօսել
Երբէք չէ վայել,
Դու շատ լու գիտես
Դող մարդիկ պահել,
Խեղճ ժողովուրդի
Փողըն ու կայքըն
Տալ յափըշտակել,
Բերել ու բաժնել :
Խան, Աստուած մինին
Տայ իշխանութիւն,
Պէտք է նա անէ
Անիրաւութիւն,
Կամ զըրկողութիւն :
Ահա պատրաստ ենք՝
Մեք մարդասպան,
Հրամայէ շուտով
Հանեն կախապան,
Կամ էսպէս ողջ ողջ
Կըրակը ձըղեն :
— Կամ
Վըղէրնիս թըրով
Խըլին ու կըտրեն :

ՔԵԱԼԲ ԱԼԻ-ԽԱՆԸ

Անօրէն ինչպէս
Համարձակում ես . . .
Անիրաւութիւն
Էստուան եմ անում.
Ա՛ռ քեզ Հայերի
Ապերախտութիւն,
Փոքըր ինչ բանով
Ուղղափառներին
Հանդարտացրել եմ
Հինդ հարիւր տուն Հայն
Ես աղաւել եմ,
Շնորհակալութեան
Տեղըն լըսում եմ
Անիրաւութիւն :
Պէտք է քոյ լեզուն
Արած 1 տակաւան,
Որ ուրիշներըն
Տեսնեն խըրտովին,
Ձը համարձակին
Հանել միւսանդամ
Առաջիւ ծըպտուն :
Է՛յ դահիճ, դանակդ
Բեր անհաւատիդ
Կըտրատէ լեզուն :

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Մէկի աչքերը
Եթէ չի տեսնում,
Երեսը մարդից
Չէ՛, չի ամաչում,
Աստուածանից էլ
Երկիւղչէ կըրում,
Դու կոյր նըստած ես
Էդ դահիզ վերայ
Դատաստան անում

Որպէս ստատանայ

ՆՈՎԱՐՈՒԶ-ԱՂԷՆ

Ատրտալում է Ասրի բէկին.

Է՛յ դահիճ, լըսէ,

Խանըն հրամայէ՝

Շուտ սըրա լեզուն

Տակիցն կըտրէ՝

ԱՍՐԻ-ԲԵԿԸ

Լեզուս տակտահան.

Է խանի հրաման

Բայց

Դահիճը թոյլ չէ տալիս Ասրի-բէկին
շարունակել խօսքը, ուժով հանել է
տալիս լեզուն եւ կտրում.

ՔԵԱՒԻ ԱԼԻ-ԽԱՆԸ

Ա՛ Նովբուդ-Աղայ,

Հըրաման արա՛,

Չոր փէտեր բերեն,

Հենց էտանդ զիզեն,

Էս երկուսին էլ

Ոտէկը կապեն,

Կըրակը ձըղեն,

Թող լաւ խորովիլին,

Երվին փըթոթվին,

Որ չահատակաց 1

Հողիքն երկընթից՝

Ուրախ աղանեն 2

Ու փառաւորվին.

Ղըրկէ մին ծառայ,

Որ Շըխ-Մարթ ուզայ

Մուշթիդըն դայ,

Որպէս զի եւ նա

Ոըրանց երվելուն

Գըրանըլի ներկայ.

Նովբուդ-աղին աչքով, ձեռքով, գրէ-

խով, լեզուով կարգադրութիւն է ա-

նում, փէտէրը բերեն ու զիզեն եւ մին
ծառայ է զրկում Թուշթէկդն դայ.

ԳԻՔԻՆ

Խան, մեք ուրախ ենք,

Երվինք խորովիլինք,

Բայց ցանկանում ենք

Ձեր դատատանը՝

Հայէրի մասին

Լըսենք խնանք,

Միամըտանք,

Ու յետոյ մեռնենք.

ՔԵԱՒԻ ԱԼԻ-ԽԱՆԸ

Երբ Հայէրը տան

Երեխայք քըսան,

Ոխտ հաղար թուման,

Կաղաւթվին կերթան,

Դէ հանդարտ զընայէք,

Երվէք սատակվէք.

ՆՈՎԱՐՈՒԶ-ԱՂԷՆ

Ահա ճըշմարիտ

Դատատան արդար,

Ատուած տացէ՛

Խանին կեանք երկար,

Դահիճ, երկաթէ

Շըղթայով կապէ՛

Գըրանց կըռնէրը

Բէր շամխուրնէրը

Մարմնէրի վերայ

Դընենք խարանէր.

Չընչհատանէրը

Դիտեմ, ինչպէս որ

Խրեանց պապէրը,

Կը կըրեն ուրախ

Քոյ տուած դաժան

Չարչարանքնէրը.

Դահիճն կիսածիժող գործիքները

դնում է կրակի մէջն.

1 Պարսկերէն շահիդ, այսինքն նահատակ. 2 Նային :

ԳԻՔԻՆ

Է՛յ Նուբրուդ աղայ,
Դու ինչ որ կամիս,
Էն ասան, խօսա,
Քոյ վատութիւնը
Քեզ պէտք է մընայ,
Մեր մահն աչքէնուս
Տակըն առած ենք,
Յետոյ եկած ենք:
Խան, շարխալա՝
Թէ է նա իրաւ,
Հէր չես մեզ դատում,
Արիւնին արիւն
Մեզանէ առնում:

ՆՈՎՐՈՒԶ-ԱՂԷՆ

Կըտրէ, անօրէն,
Ձէնըդ անայտան,
Է՛յ, տո՛ւր զործիքըդ,
Դահլճին է ասում.
Ես նախ մին խարան
Դընեմ բերանին,
Որ էլ միւսանդամ
Ձը համարձակի
Խօսիլ ընդունայն:

ՍԷԻԴ-ԱԼԻՆ

Ձէ, Նուբրուդ-աղայ,
Փոքր ինչ համբերեան,
Մինչ Շըխ Մուրթուղայ
Մուշթէիդըն դայ,
Պատիժըն պէտք ա
Ըսկիդըն նա սայ,
Ըստ որում մինը
Ըսպանդողնէրի
Ճկտով 1 սէիդ ա:

Հրապարակի գլխին գուրս է գալիս

օխարակ երկարամօրուս Մուշթէիդն
աչքէն զեանին ձգած, մին անհե-
թեթ մեծ սպիտակ չարմա 2 գլխին,
վերարկուի կէտոյն գլխի կէսն ծած-
կած, շատ բարակ դաւադան ձեռ-
քունն: Առաջին զընում են վեց մուշ-
լայք 3 զոյգ զոյգ. յետինցն դալիս են
բազմութիւն մոլլայից եւ աշխարհա-
կանաց: Երբ մտնում է հրապարակն,
խաժամումն ձեռքերը, տաներն են
համբուրում, ամենայն կողմիցն Սա-
լամալէքում ասելով: Մուշթէիդն երբ
հասնում է Խանի նստած լուսամտի
մօտն, Խանի ծառայքն խմացումն են
տալիս Խանին, որ եւ կանգնում է
օղնութեամբ ծառայիցն:

ՔԵԱԼԻ ԱԼԻ-ԽԱՆԸ Մուշթէիդին

Սալամ ալէքում 4

ՇԸԽ-ՄՈՒՐԹՈՒԶԱՅՆ

Ալէքում սալամ,
Աչքերն ցածր ձգած.
Խան, շատ ուշացում
Ներել խնդրում ամ,
Ես պատճառ էլամ
Երկար նըստելոյդ,
Ինձ սպասելոյդ,
Ու նեղանալոյդ:

ՔԵԱԼԻ ԱԼԻ-ԽԱՆԸ

Քան լիցի, Տէր լամ,
Թէ նեղացել լամ:

ՇԸԽ-ՄՈՒՐԹՈՒԶԱՅՆ

Ինպէս է արդեօք
Առողջութիւնըդ,
Եւ ողջութիւնըդ,
Քիթըդ 5 պարարաւ 5
Մեր հաւատի վարդ:

1 Զոյգ, մի եւ նոյն բառի նշանակութիւնը ունի. 2 Փաթաթոց գլխի. 3 Հո-
գեւորականք մահմետականաց. 4 Ողջոյն մահմետականաց. 5 Ոճ Պարսից, որ-
պէս է դամազը շըմա չազ ասթ:

ԲԵԱԼԻ ԱԼԻ-ԻԱՆԸ

Հէր չէք գալիս վեր . . .

Շնորհակալ եմ, տէր,

Ծառայող արողջ է,

Քախտն էլ յաջող է:

Մատով ցոյց է տալիս կոյր կոյր

Ասրի—բէկին եւ Գիքուն.

ՇԸԻ—ՄՈՒՐԹՈՒԶԱԾՆ

Երեսը դարձնում է եւ նայում կալա-
նաւորներին.

Շնորհիւ Արարչին,

Նրա մարգարէին,

Միշտ յաջող լինի. . . .

Արանք են անյոյս

Անհաւատները,

Որք ըսպանել են

Ուղղափառները:

Նովրուզ աղայ, հէր

Կանգնած նայում էք,

Կրակ ձրդելըն

Ուշացնում էք:

ՇՈՎՐՈՒԶ—ՍՂԷՆ

Սպասում էինք,

Ար շնորհ բերիք,

Ֆանջանքն յառաջ

Դուք սկսել էիք,

Յետոյ ինչ կարգն է:

Մեք կատարէինք:

ՇԸԻ—ՄՈՒՐԹՈՒԶԱԾՆ

Գնում է Ասրի—բէկի եւ Գիքու գլխի

վերայ կենում է, մինչ նոքա ոտը

ձեռը շղթայով կապած, ընկած են

փէտի զիզի առաջին,

Մեր սուրբ հաւատի

ձշմարտութիւնը

Վերջը ձգող ձեզ

Էս ատովծանը.

Ժանտ անհաւատներ.

ՇԹԷ լծուքքանաք,

Մեր սուրբ հաւատը

Դալը կտոննաք,

Կարող եմ միջնորդ

Ընել ձեզ համար,

Գիտեմ, կազատէ

Խանր բարերար,

Չէք էլ դուք տանջվող

Էսպէս չարաչար:

ԳԻՔԻՆ. Ասրի-բէկը գլխով է ա-

նում թէ չէ ընդունում հաւատաւոր-
խոթիւնն.

Էսպէս պատիժներ,

Անգուցթ սեղաններ

Ոչ ոք չըկարծէ

Մեզ մեր հաւատից

Պոկել կարող է:

ՇԸԻ—Մուրթուզայ Մուրթիւն Նեռա-
նում է մեծ շամփուրը վեր առնում
եւ խորան զնում դատապարտների
բերանի վերայ, ու վերադառնում
դէպի Խանի պալատն: Փէտի զիզին
շատ կողմիցն կրակ են տալիս, որ շուտ
վառվի եւ ամենայն կողմիցն շառ-
փուրներն վեր են առնում: Խարան
զնում դատապարտների անձի վերայ,
որ որ պատահում է: Խառնում են
գոչում է, թէ վարձք է, թող ես եւ
բաժանորդ լինեմ էդ վարձքին, վասն
որայ միմեանց ձեռքիցն են խլում
շամփուրներն: Դահլիճներ տեսնում
են որ շատ խառնվեց ամբոխն, վեր
են առնում դատապարտեալներին,
ձգում կրակը: Նաղարայ գունդն
փչում է եւ ամբոխն վառք Աստու-
ծայ է աչապկում, կամ եւս Ալի:

Գ. Շերմաղանեան:

ԾՐԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Ե Ի

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԱՅԺԱՐԵԱՆ

ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ



ՍՄԲԱՏ մինակ ֆնալով երեսի վրայ թողած իրաներից, կապոյտ բերդումը ապաւինեցաւ, որնոր Յուսուփ անմիջապէս պաշարեց: Պաշարումը մի տարիի չափ տեւեց, բերդապահ զօրքը ոգևորուած իրա թաղաւորի ներկայութեամբը, որու համար իր կեանքն էր տալի, ամէն տեսակ զրկանք և նեղութիւն տարաւ և քաջութեան հրաշքներ գործեց, Յուսուփի մի քանի յարձակմանցը դէմ դնելով քաջութեամբ և նրա բանակին ճակատն որ քրիստոնեայներից էր բաղկացած, մեծ ջարդ և բուրդ անելով: Մի տարուց յետոյ Սմբատ ստիպուելով սովիցը՝ և քրիստոնեաներուն արիւնը թափուելը խնայելով, անձնատուր եղաւ այն պայմանաւ, որ իրա զօրքերուն կեանքը ապահով մնայ: Երդ մնազանց Յուսուփը մի անդամ, որ թաղաւորին անձն իր ձեռին ձգեց, մոռացաւ իր խոստմունքը և իր երդումը և սպանեց Սմբատին մի անարդ կերպով նրա թագաւորութեան քսան և երկրորդ տարումը:

Աշոտ Բ. Երկաթ մականուանելոյն թաղաւորութեան ժամանակն Հայաստանումը շարունակ պատերազմ էր լինում քուրքմէներից, Պարսիկներից և աւելի իրա հպատակ իշխաններից, որոնց պատճառով և Հայաստան քարուքանդ եղաւ, ամէն տեղ աւեր և խորժանում տիրուելով : Այս աւերման և խորժանմանը վրայ հասաւ և մի սոսկալի սով, որ ժողովրդեան աղէտքն ու չարիքը աւելի սաստկացրեց՝ ամբողջ քաղաքներ անբնակ անելով : Յուսուփ Սմբատայ անձը ձեռք բերելով՝ առ ժամանակ Հայաստանի աէրն էր եղել և մի քանի բերդեր օտար զօրքեր էին բռնել : Աշոտ, որ իր հօրը պատահած վատնգիցն ազատուել էր, մի փառաւոր վրէժխնդրութեամբ եղած փնասուռն մի դարման անելու էր մտածում, մանաւանդ երբոր լսեց իր հօր աղէտալի մահը, էլ կարող չեղաւ չափ դնել իր բարկութեանը : Իր մօտը հաւաքած զօրքերու մի բաժինովն սկսաւ իր երկրին աէր լինել 915 թուին : Գրեթէ բոլոր ամուր քաղաքներն ու տեղերն, որոնք օտար զօրքեր էին բռնել, յարձակմամբ առնուեցան և նրանց մէջ եղած զօրքերն էլ սրից անցկացան :

Այս յաղթութեանց համբաւը նախարարներին դարձեցնելով, որոնք ամէնքն էլ իրանց ամուր բերդերն էին քաշուել, եկան ժողովեցան և Աշոտին գահի վրայ նստեցրին : Յուսուփ լսելով իր պահապան զօրքերու յաղթուելը, ուրիշ երկու բանակ էլի դրից Աշոտի առաջն առնելու : Այս պատերազմն եօթը տարի տևեց, որնոր տրդելք լինելով երկրագործութեան, պատճառ տուաւ մի նոր սով լինելու յառաջուանից աւելի սոսկալի : Այս միջոցին Աշոտ հրաւիրուելով Կասաանդին Է. Պերսիեռուժէն մականուանեալից, Կոստանդնուպօլիս գնաց, ուր տեղաց ետ դարձաւ մի յունական բանակով : Յուսուփ վախենալով այս համբաւից, փորձ փորձեց մի քաղաքական բանասարկութիւն սարքել, որ բոլորովին գլուխ տարաւ : Աշոտ Երկաթի երբօրորդի Աշոտի զլխին թաղ դրաւ և Հայաստանի թաղաւոր անուանեց : Շատ պատերազմներ եղաւ երկու Աշոտներու մէջ և Հայոց արիւնը թափուեցաւ, ոչ թէ երկրի լաւութեան համար, այլ երկու փառամոլներու պահանջմանցը համար : Ի վերջոյ Յովհաննէս կաթողիկոսը մէջ

մտաւ և իր յորդորանքներով նրանց միմեանց հետ հաշանցրուց : Աշոտ իր կենաց մնացորդը անընդհատ կռիւներով անցկացրուց, որոնք յարուցանում էին իր ապստամբ իշխանները : Իր թագաւորութեան վերջին ժամանակները, Շահն-Շահ (թագաւորներու թագաւոր) փառաւոր Խիտղասն առաւ, միւս փոքրիկ թագաւորներից որոշուելու համար, որոնք աւելի Սէյճուքեանց բանսարկու քաղաքականութեամբ յառաջ էին եկել, քան թէ իրանց փառասիրութենից : Աշոտ տասն և հինգ տարի անօգուտ թագաւորութիւն անելուց յետոյ, վախճանեցաւ :

Աշոտ Բ-ի եղբայր Աբասի թագաւորութիւնը 928-ից մինչև 951 խաղաղութեան, երջանկութեան և առատութեան թագաւորութիւն եղաւ. Աբասը քաջ զօրապետ և իմաստուն անօրէն լինելով, բոլոր իր ուշադրութիւնը դարձրուց իր ժողովրդեան բարբն վարքը պնդացնելու, նրա վերքերը բժշկելու և նրան երջանիկ անելու, նրան ապահով և միանգամայն բարեկեցիկ անելով : Գերի ընկնող Աբաբայիքը Հայ գերիներու հետ փոփոխուեցան, որոնք գերութեան մէջ հեծում էին : Յուսուփի հետ խաղաղութեան մի նոր դաշնադրութիւն հաստատելով, երկար ժամանակ այս վայրենի ասպատակների արշաւանքը կանգնեցրուց : Իրա թագաւորութեան ժամանակ քաղաքների, աւանների, աղքատանոցների, վանքեր և եկեղեցիների շինուեցան, մանաւանդ Կարսայ հոյակապ մայր եկեղեցին, որնոր յետոյ մզկիթ դառաւ : Մի պատերազմում, որ պարտաւորեցաւ տալ Կուր գետի մօտ Աբխազների հետ, յաղթեց նրանց և ցիրուցան արաւ. ուր նրանց Բէր թագաւորը Աբասի ձեռքն ընկնելով, Կարս բերուեցաւ և անգթաբար աչքի լուսից զրկուեցաւ :

Աշոտ Գ. Աբասի անդրանիկ որդին իր հօրը յաջորդեց, որ 951 թուին վախճանել էր : Աշոտ իր ժողովրդեան բարոյական և նիւթական զարգացման համար ունեցած հոգացողութեան մէջ, պատերազմելուց միշտ հեռու կեցաւ. սակայն մի այնպիսի ժամանակումն էր թագաւորում, որ զօրաւորագունի իրաւունքիցն աւելի ուրիշ իրաւունք չէր ճանաչուում, նրա համար պարտաւորուեցաւ 90,000 զօրքով մի մշտակայ բա-

նակ պահել հետեակ և ձիաւոր զօրքերից բաղկացած, իր հարեաններին ահ տալու համար : Համառուն, Խալիֆայի բանակի զլխաւոր հրամանատարը, ապստամբելով իր տիրոջը դէմ, Միջագետքի և Ատրպատականի մէջ աւար և կոտոր սիրուելոց յետոյ, Հայաստանի սահմաններին մօտեցաւ նոյն և մի վայրենութիւնը ի գործ դնելու համար : Աշոտ այս լսելով, նրա դէմ գնաց և արիւնհահել պատերազմ տալուց յետոյ, ջարդ և բուրդ արաւ ասպատակներին : Համառուն Աշոտի ձեռքն ընկնելով, գլուխը կորցրուց : Այս դէպքը Խալիֆային բնականաբար հաճելի լինելով, պատճառ եղաւ էլ աւելի իրա և Աշոտի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները յաճախուելուն : Այս ժամանակից Հայաստանի սահմանները արեւելքում և հարաւում, որոնք կից էին մահմետականների տիրած երկիրներուն, ամուր բերդերով և զօրքերով ամրացան : Յովհաննէս ջըմըշկիկն դէպի Տիգրիս գալով Սարակիսոսներու հետ պատերազմելու, յանկարծ իր ճանապարհից դարձաւ և եկաւ իր բանակը Մշու կողմերը դրաւ, մի սպառնալի դիրք բռնելով : Աշոտ այս բանս լսելով, անմիջապէս մի բանակ կազմեց և նրա գլխացը գնաց 80,000 զօրքով : Կայսրը հաշտուեցաւ նրա հետ և յետ դարձաւ 10,000 ձիաւոր Հայ զօրքով, որ Աշոտ նրան տուաւ : Աշոտ իր Թագաւորութեան վերջին տարիներումը ինքն իրան բոլորովին աստուածպաշտեան տուաւ բարի բարի գործքեր անելու, իր ծախքով ամէն քաղաք և գիւղ որբերի համար անկեւանոցներ և աղքատանոցներ շինել տուաւ, նրանց մեծ մեծ եկամուտներ կապելով : Իրա խոնարհ և բարի բնաւորութեան վրայ մի գաղափար տալու համար այն կասեց միայն, որ երբէք սեղան չէր նստիլ առանց իր մօտն ունենալու մի հիւանդ, մի Թրշուառ կամ մի քանի աղքատ մարդիկ, որոնց իր բարեկամներն և տէրերը կանուանէր : Ազգն էլ իր երախտագիտութեանը փոխարէն նրան Ողորմած մականունը տուաւ և նրա յիշատակը յաւիտեան մնաց : Իր Թագաւորութեան քսան և վեցերորդ տարումը վախճանեցաւ 977 թուին, իր ազգին սէրն ու ցաւն իր վրայ գրաւելով :

Սմբատ Բ. Աշոտ Գ. - ի անդրանիկ որդին նոյն տարին իր

Հայրենական դահն էլաւ և իր հօր շաւիղովը գնալով իր տէրութեան մէջ այլ և այլ քաղաքներ և բերդեր կառուց և ի մէջ այլոց Անի քաղաքը շինեց, որուն պարիսպներն ու զարդարանքներն ամբողջ շինել տուաւ : Այս գեղեցիկ Անի քաղաքը : Աշոտի սիրեկան կայսրանք՝ Սմբատայ ժամանակ մի ճշմարիտ մայրաքաղաք եղաւ, արեւելեան և հարաւային կողմերից Ախուրեան (Արփայ-չայ) գետն ունելով և արեւմտեան կողմից էլ Մազկոյաձորը : Հիւսիսային կողմից էլ կրկնակի պարիսպներով և բոլորակ աշտարակներով և լայն ու խոր քարաշէն փռով պատսպարելով : Քաղաքի պարտումը մայր և կեղեցին շինուեցաւ, որնոր մինչև այսօր զարմացման մի առարկայ է ամէն Եւրոպայի ճանապարհորդներուն : Արքունի պալատը Մազկոյաձորի վրայ եղած արեւմտեան մասին վրայ էր շինուած : Նրա ճակատը միսիւնով էր շինուած, քաղաքի հարաւային կողմում եղած սրածայր լեռը բերդի տեղ էր բռնում տէրութեան գահը պահելու : Սակայն Սմբատ Լուսինն պարտաւորուեցաւ իր դորձքերից ձեռք վեր առնելու իր հօրեղբօր Կարսայ թագաւոր Մուշեղի գէմ պատերազմելու համար : Տայոց Կիւրապաղատ Դաւթի միջնորդութեամբ խաղաղութիւն արու իր բարեգործութեանց հետը լինելու համար : Տրդատ Հայ ճարտարապետը, որ մի մեծ տաղանդով մարդ էր, թագաւորի կամայը համեմատ այն մեծամեծ եկեղեցիներն ու բերդերը շինեց, որոնք տակաւին մի մասամբ Անիումը և նրա շրջակայում մնացել են : Սմբատ 990 թուին վախճանեցաւ, իր յիշատակն անարգելով մի գայթակղելի ամուսնութեամբ, որ արաւ ընդդէմ Հայաստանեայց եկեղեցւոյ օրինացը իր քրոջ աղջկան հետ :

Աբբաս Կարսայ փոքրիկ թագաւորութեան Մուշեղ թագաւորի որդին երեւելի եղաւ դպրութեանց և գիտութեանց համար ցոյց տուած սիրովը : Հրապարակական դպրոցներ բաց արաւ Կարսումը, ուր տեղ շատ երիտասարդներ ամէն կողմից գալով, կատարելագործուեցան լեզուադիտութեան և գեղեցիկ դպրութեանց, ուսումնական, իմաստասիրական և աստուածաբանական ուսմանց մէջ :

Սմբատ Բ.-ի եղբայր Գագիկ Ա.-ի երեսնէն տարուայ

Թագաւորութիւնը Հայաստանի համար խաղաղութեան և ազգային զարգացման ժամանակ եղաւ և Բագրատունեաց տունն իր մեծութեան և փռուաց վերջին ծայրը հասաւ. մօտ 900 վանք, նոյնչափ դպրոցներ և անկեանոցներ, որք են դպրութեանց և գիտութեանց համար խաղաղ ապաստարան՝ Աշոտ Գ.-ից, Սմբատ Բ.-ից և Գագիկ առաջինից շինուելով, ամէն կարգ ժողովրդեան մէջ քրիստոնէութեան լոյսն ու ռուսմն էր ծաւալում և բարոյականութիւնն ու լուսաւորութիւնն էր հաստատում։ Երկրագործութիւնը նրա Թագաւորութեան ժամանակը մինչևանհոր զարգացում ստացաւ. երկիրը մինչև Արագած և Արայի լեռներու բլուրներն ու տափերը մշակուելով բերրի հունձեր, խաղողի թփեր, պարտէզներ և պաղատու ծառերէին ցոյց տալիս. վաճառականութիւնը մի նոր ցնցում արաւ։ Անի, Արծն, Բաղեշ, Նախիջևան և ուրիշ քաղաքներ պահարան եղան Հնդկաստանու և Պարսկաստանու, Յունաց և Արաբացւոց տէրութեանց հարուստ ապրանքներին։ Գագիկ որ եկեղեցականաց ևս ահագին եկամաններ կապեց Անիում այն մայր եկեղեցին շինել տուաւ, որուն անունը սուրբ Գրիգոր լուսաւորիչ ասուեցաւ։ Կատրամիդէ Թագուհին թէ եռանդով և թէ աստուածապաշտութեամբ նրանից ետ չմնաց Աստուծոյ ծառայելու և ազքատաց օգնելումը։ Նա կատարեց Անիի մայր եկեղեցին, որնոր Սմբատ Բ. սկսել էր տուել։ Գագիկ 1020 թուին վախճանեցաւ, իր ժողովրդեանը մեծ ցաւ տալով։ Բագրատունեաց ցեղը նրա միջում իր վերջին դիւցազնը կորցրուց և նրանից յետոյ իր փառքը սկսաւ նսեմանալ։

Յովհաննէս Սմբատ Գագիկայ անդրանիկ որդին 1020 թվւին Հայաստանի գահի վրայ բազմեցաւ, ոչ միայն իր տէրութիւնը կառավարելու մէջ ունեցած անկարողութիւնն ու տգիտութիւնը ցոյց տալու համար աշխարհքին, այլ նաև և մի բանակ հրամայելումը։ Աշոտ իր կրտսեր եղբայրը ընդհակառակն քաջ, աշխոյժ և ճարտար էր և Հայաստան անշուշտ նրա ձեռքի տակը երջանիկ կարող էր լինել և իր քաղաքական կեանքը կերկրացնէր։ Բայց անդրանկութեան իրաւունքը բանեցաւ և Յովհաննէս Սմբատը Թագաւոր օծուեցաւ։ Այն ժամանակ իրաւ և իր եղբօրը մէջ գահակալութեան համար

մի պատերազմ՝ բացուեցաւ : Յովհաննէս Սմբատը թէ և 60,000 մարդից բաղկացած մի բանակի գլուխն էր անցկացած, բայց յաղթուեցաւ և ցիրուցան եղաւ Աշոտից և իր փրկութիւնը Անւոյ պարիսպներու մէջ դտաւ, որոնց մէջ ապաստանուեցաւ : Այս երկու եղբարց մէջ խաղաղութիւն եղաւ Արխազների Գէորգ թագաւորի և Հայաստանեայց Պետրոս կաթողիկոսի միջնորդութեամբ : Խաղաղութիւնն այն պայմանով էր եղել, որ Ա. Յովհաննէս Սմբատն բոլոր իր կեանքում Անւոյ և նրա բռնորդութեամբ եղած մի քանի գաւառներու տէր կը լինի. Բ. Աշոտն էլ Պարսկաստանու և Վրաստանու սահմանակից եղած գաւառներու վրայ կտիրէ և Գ. առաջնոյն մեռնելուցը յետոյ, երկրորդը միայնակ կտիրէ բոլոր տէրութեան վրայ : Այս պայմանալորութիւնն որ եղաւ, Յովհաննէս Սմբատ մի որդագայթի մէջ ընկաւ, որ Գէորգ Արխազաց թագաւորն էր լարել և մահուանից նրանով միայն ազատուեց, որ հիւսիւսային կողմերում երեք բերդ թողեց նրան. մի փոքր յետոյ մի ուրիշ զարանի մէջ էլ բռնուեցաւ, որնոր Աշոտ իր եղբայրն էր պատարաստել : Բայց իր կեանքը իր հաւատարիմ իշխան Ապիրատի ձեռքով ազատեց զրանից :

1021 Թուին Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թագաւորը, էլ կարող չլինելով իր տէրութիւնը պաշտպանել Պարսկաստանու Էմիրների յարձակմունքներից, Յունաց կայսրութեան տուաւ իր երկիրները և նրա փոխարէն Սեբաստիա քաղաքը ընդունեց¹ և այն տեղ քաշուեցաւ : Մի փոքր յետոյ Սէլձուկեանք մի յարձակում արին Յովհաննէս Սմբատի տէրութեան արևելեան գաւառների վրայ և շատ աւեր և կոտորած արին, բայց վերջապէս յաղթուելով Վասակ Պահլավունի² իշխանից, ետ քաշուեցան շուտով :

Վասիլ Բ. Արխազներու Գէորգ թագաւորին նուաճելու համար, որ ապստամբել էր, 1023 թուին ցամաքով Թրապիզոն ելաւ, բազմաթիւ զօրքով բոլորովին նուաճեց Արխազներու երկիրը : Այս ժամանակն էր, որ Դաւիթ Տայոց Կիւրապաղատը կտակով իր երկիրները կայսեր թողուց : Այն տեղից Վասիլ

¹ Այսօրուայ Սըվազը, փոքր Հայաստանումը :

² Պելլի կամ Պելլէի. Աբչակունեաց չախիկից :

Պաժտեման էր գլխի վրայ Յովհաննէս Սմբատայ երկիրներու վրայ կասկածելով, որ նա (ըստ ասելոյն Կեդրեմոսի) նպաստում էր և պահպանում Գեորգ ազատամբին : Յովհաննէս Սմբատ վախենալով կայսեր դիտաւորութենից, նրա յառաջը դնեց Պետրոս կաթողիկոսին իր ձեռքովը գրուած մի նամակով, որու մէջ պարունակում էր այս խոստմունքը. « Թէ իր մեռնելուց յետոյ իր երկիրները նրան է թողնում : Կայսրը ուրախ լինելով մի այսպիսի յաջող առաջարկութեան վրայ, Կոստանդնուպօլիս դարձաւ առանց Յովհաննէս Սմբատին աւելի նեղութիւն տալու : Երկու տարի յետոյ Վասիլ 1025 թուին, իր մահուան անկողնոյն մէջ և չարչարուելով անշուշտ իր անիրաւութեան յիշատակովը և գուցէ թէ իր տէրութեան շահը մտածելով՝ վերոյիշեալ նամակը մի Հայ քահանայի յանձնեց ասելով նրան « տուր այս նամակը քո թագաւորին և ասա՛ նրան իմ կողմից, որ ինչպէս ամէն մահկանացու մարդ և ես յաւիտենականութեան դրան շեմքի վրայ եմ կանգնած և չեմ կամենում անիրաւութեամբ ուրիշի ստացուածքը յափշտակել, թող ուրեմն ետ առնու իր նամակը և իր թագաւորութիւնը և իր որդւոցը տայ » : Երբ որ Կոստանդին Բ. յաջորդեց Վասիլի դահլին վրայ, անարժան այս քահանան նրա յառաջն ելաւ և նրան յանձնեց այն նամակն, որնոր Յովհաննէս Սմբատին յանձնելու տեղ իր մօտն էր պահել : Այս բանս որ շատ աւելի ամօթ և անարժան է Աստուծոյ քահանայի և մի Հայու ձեռքով լինելուն, համար, հետեւանքն ունեցաւ ամբողջ Հայաստանի կործանումը և հազարաւոր քրիստոնեայներու մահը, ինչպէս որ շուտով պիտի տեսնենք :

Յովհաննէս Սմբատ քսան տարի թագաւորելուց յետոյ 1040 թուին վախճանեցաւ, առանց ժառանգ թողելու : Աշտ իրա եղբայրը և իր ժառանգը, իրանից յառաջ էր մեռել : Ուրիշ մարդ չէր մնայել բայց միայն Գագիկը Աշտոյ որդին, որ դեռ երիտասարդ էր և երկու թաղի էլ ժառանգ էր : Երբ որ Միքայէլ Գալաթիոտ լսեց Յովհաննէս Սմբատի մահը, մարդ ուղարկեց Հայաստանի թագաւորութիւնը պահանջելու : Տէրութեան խնամակալների խորհուրդը թէ և այլևայլ կարծիքներով բաժանուած էր իրարից, սակայն այս

անգամ միաբերան մերժելով, քաջութեամբ պատասխան տուին կայսեր : Վեստ¹ Սարգիսն, որ տէրութեան խնամակալն էր, մի փառամոլ մարդ էր և իրան համար մի զօրաւոր կողմնակցութիւն ունէր : Սա ջանք արաւ Հայաստանի թագը իր զլուխը դնելու կամ թէ ոչ Յունաց տալու : Վահրամ Պահլավունի զօրապետը, մի ուրիշ կողմնակցութեան զլուխ էր, որոյ կամքն էր պահպանել թագը տիրապետողն գլխի վրայ և ամէն կերպով մինչև վերջն շունչը պաշտպանել : Գաղիկ թէ և դեռ երիտասարդ էր, սակայն իր խելքովն ու վայելուչ տեսքով մեծ մեծ յոյսեր էր ցոյց տալի : Գալաֆաթ զայրանալով խնամակալաց մերժելու վրայ, որոշեց որ իր պահանջ մունքները զինու զօրութեամբ բանեցնէ : Նրեք բանակ երեք անգամ այս երկրին դէմ գալով իր կողմէն, յաղթուեցան և ցիրուցան եղան, բայց հարկաւ մեծ նեղութիւն տալով Հայաստանին : Յոյները չվհատեցան և չնայելով այս պատերազմներու անյաջող ելքին, մի չորրորդ անգամ էլ փորձ փորձեցին Կաստանդին Թ.-ի ժամանակ, որ կասուի Մոնոմախոս : Յոյք իրանց առաջնորդ դաւաճաններ ունենալով, ամէն տեղ ահռելի աւեր և կոտորած սփռեցին և եկան Անոյ առջևը բանակ դրին. մի և նոյն ժամանակ Գալիթ Անհողին² առնուանալը հաղարաւոր Աղուաններու զլուխն անցկենալով, որոնք Կուր գետի ափանց վրայ բնակող ժողովուրդ էին և մինչև այն ժամանակ բարեկամ էին Հայոց, որոնց միշտ Հայք պաշտպանել էին, դրաւ եց Մոնոմախոսի թելադրութեամբ Հայաստանի հիւսիսային արևմտեան գաւառները և իր ճանապարհի վրայ շատ քաղաքներ և աւաններ կործանեց : Վահրամ, անմահ Վահրամը թէ և ու թսուհամեայ էր, դիւցազնութեամբ պաշտպանեց Անին : 30,000 զօրքով մի զօրաւոր յարձակում արաւ դէպի դուռը : Յունաց բանակը ջարդ ու բուրդ եղած և 20,000 մարդ էլ մեռած և վերաւորուած

1 Վեստիէր, Վեստիարիոս, սենեկապետի աստիճան, որ Յոյն կայսրները մեծամեծ մարդկանց էին տալի միջին դարումը, Վեստ (Յունարէն) : Հայոց շատ հեղինակներ այս բառիս սկիզբը չգիտենալով անհեթեթ կերպով մեկնեցին :

2 Առանց հողի.

Թողելով Անւոյ առջևը, շտապելով քաշուեցաւ իր երկրի վրայ:

Ահա հրաման այն ժամանակ դահի ժառանգին Անի բերել տուաւ և նրան Հայաստանի Թագաւոր օծել տուաւ: Գազիկ երկրորդ անուշով: Երիտասարդ Թագաւորը մեծ գործունէութեամբ իր երկրի մէջ խաղաղութիւն և կարգաւորութիւն կատարելու ետեւիցն եղաւ: Այն տեղաց թուրքմէններու խումբերը դուրս արաւ, որոնք ժամանակ գտնելով Հայաստանի խռովութեան ժամանակ, յարձակուել էին նրա վրայ: Հայաստան հազիւ շունչէր առնում մի փոքր, որ Մոմոնախ նըրանց մարդ զրկեց Անին սրահանջելու համար, բայց Գազիկ մերժեց: Ասիդ և Նիկողոս Յոյն զօրապետները հրաման առին իրանց տիրոջից զինու զօրութեամբ տիրելու Անիին: Մոմոնախ նոյն և մի ժամանակ ընծայներ տալով Սքուսուար Գուլնի Լիւրին, զրգուում էր Հայաստան անհանդիստ առնելու արեւելեան կողմից: Գազիկ այսպէս ներքն ընկնելով և տեսնելով, որ իրանից շատ աւելի զօրաւոր թշնամուց առաջն է, ամենւին իր հանձարը չկորցրուց և պատրաստուեցաւ որ և է հնարաւոր դէպքերու դէմ պաշտպանելու իրան: Ընծաներ տալով Էմիրին, ձեռք վեր առնել տուաւ նրան իր դիտաւորութենից և յետոյ Յունաց բանակի վրայ դիմեց, որ կարծում էր, թէ այս անգամ Անին իր ձեռք կընկնի անպատճառ: Յոյները բութ բոքուած էին մի առատ կողոպուտ անելու յուսով, իսկ Հայք իրանց բռնն ու կրօնը պահպանելու պարտականութեան խղճով: Կռիւք ոչ երկար եղաւ և ոչ արիւնահեղ, այլ Յունաց փախուստովը վերջացաւ, որ նոյն ժամանակից երկու տարիի չափ Անւոյ վրայ մտածելուց դադար արին:

Սակայն Մոմոնախ յաջողեցաւ ձեռք բերելու ներդուրեամբ այն, որ կարող էր եղել զինու զօրութեամբ կատարելու և զօրաւարացը Անիի առջև կրած հարուածից յետոյ, Գազիկայ բարեկամն ու զարմացողն եղաւ կեղծաւորութեամբ: Սխաւ նրա հետ սաստիկ բարեկամական թըղթակցութիւն անել, որով յայտնում էր իր փափաքը տեսնել Գազիկին միանգամ մի յաւիտենական խաղաղութեան դռնադուրութիւն անելու նրա հետ: Ուստի լաւ ցոյց տալու համար, որ հաւատարիմ էր իր բարեկամութեան մէջ, Գազիկայ հետ

Հայ պատգամաւորներու առջեւ մի հանդիսաւոր երդում կե-
րաւ սուրբ Գրքի եւ Յիսուս Քրիստոսի Խաչի վրայ :

Գաղիկ համոզուելով այսքան բարեկամական նշաններէյ
եւ յորդորուած դաւաճան վեհատ Սարգիսիյ, Կոստանդնուպօլիս
գնաց, ծերունի վահրամի խորհրդին մօտիկ չանելով : Մոնո-
մախ ընդունեց Գաղիկին իրան աստիճանին վայել պատուով :
բայց մի քանի ժամանակից յետոյ առաջարկեց նրան Անին
տալու եւ տեսնելով, որ նա սաստիկ դիմադրութիւն է անում,
պահեստի դնել տուաւ Գաղիկին Բոսփորի մի ամայի կղզւոյ
մէջ ընդդէմ ամենայն մարդկային իրաւանց :

Վեհատ Սարգսի կուսակիցները խմացում առնելով թագա-
ւորի արգելման մէջ լինելը, մի խորհուրդ արին եւ որոշեցին,
որ Անոյ քառասուն բանալիները զրկեն կայսեր մի նամակով,
որով մէջ գրուած էր, թէ «իրանք տալիս են կայսեր բոլոր ա-
րեւելեան տէրութիւնը» :

Այս նամակը ձեռին, Մոնոմախ նորոգեց իր պահանջ-
մունքը դժբաղդ Գաղիկից, որ դեռ շատ պաշտպանեց ի-
րաւունքները, բողոքելով իրա դէմ եղած բռնաբարութեան
դէմ : Բայց տեսնելով, որ էլ յաւիտեան իր երկիրը տեսնելու ար-
գելուած էր, իր հաւանութիւնը ակամայ տալու ստիպուեցաւ :
Գաղիկ 1045 թուին իր թագաւորութիւնը Յունաց կայսեր
թողուց եւ ստացաւ նրա փոխարէն Բեսու Կապադովկիայի
փոքրիկ քաղաքը եւ մի աղարանք Բոսփորի մէջ :

Պարսկաման ներքինի եւ զօրավար Յունաց, Հայաստան
զրկուեցաւ մի բանակով նրան տէր լինելու : Անոյ առջեւ հաս-
նելով, որ ներս մտնելու յոյս ունէր յաղթանակով, ընդհակա-
ռակն դռները փակուած գտաւ եւ բոլոր զօրքերն էլ զէնքը
ձեռին ոտքի վրայ պատրաստ : Ուստի մի կանոնաւոր պաշա-
րում անելու ձեռք զարկաւ, սակայն Անոյ զօրքը մի յար-
ձակում անելով դէպի դուրս, ջարդ ու փշոր արաւ պաշարող-
ներին, որոնք նորունց յետ քաշուեցան : Ի վերջոյ մատնու-
թիւնը յաղթեց վերջին անգամ : Պարսկաման յետ կանչուե-
ցաւ Անիոյ տէր լինելու : Եւ տարաբաղդ Հայաստանը Յունաց
մի զաւառ դառաւ, բայց ոչ երկար ժամանակի համար :

Եթէ երբէք Բիւզանդիոնի արքունիքը ծանր սխալանքներ

արաւ, որնոր յետոյ իր անկման և կործանման պատճառ լինի, հայկական թագաւորութեանց իր կայսրութեան մէջ ամփոփելը կամ միաւորելը ամէն քողաքագէտ մարդիկներէց պէտք է նկատուի, որ այն սխալանքներէց ամէնից ակներևն ու ծանրն է : Արևելեան կայսրութիւնը որչափ որ մեծ երևեցաւ, իրօք ուրիշ բան չէր բայց միայն այլևայլ ազգերու, ցեղերու և կրօններու խուռն բազմութիւն, որոնք միշտ պատրաստ էին ապստամբելու առաջին սրատահած առթիւն ընդդէմ Յունական տիրապետութեան և օգնական լինելու նաև նրանց՝ որոնք այս կայսրութեան վրայ էին յարձակում : Տասներորդ և մեասաներորդ դարերում Յունական տարերքը շատ տկար էր այն տեղ, համեմատութեամբ Բուլղար, Սլաւոն, Հայ, Վրացի, Ասորի կամ Սելաղ տարերքին : Օրէնքն ու արդարութիւնն այն տեղ միայն թղթերու մէջ էին զրուած, զինւորական բռնակալութիւնը այն տեղաց ամէն իրաւունք դուրս էր հանել և Մեծին Կոստանդինուպոլի դահլ ձեռք բերելը զինւորական տմարդի ձեռին մի խաղաղք էր եղել, որու մէջ և հայկական ցեղն էլ մի մեծ մասն ունեցաւ¹ : Բաղրատունեաց և Արծրունեաց թագաւո-

1 Ահաւասիկ Հայոց ցեղից Յունաց կայսր եղողներուն ցուցակը :

Ա. Մօրիկ, Յօշականում ծնած Էջմիածնի մօտ, որ 582-ից մինչև 602 թիւը կայսրութիւն արեց :

Բ. Մժէժ, կամ Միսաէս 667 թուին :

Դ. Փիլիպպոս, Վարդանայ որդին 711-ից մինչև 713 :

Դ. Արաւաղդ 741-ից մինչև 743 :

Ե. Լէոն Է. Արծրունի հայկազն անուանեալը 813 ից մինչև 820 :

Զ. Վասիլ Ա. Արշակունին Հայ գաղթականաց մէջ է ծնել Մակեդոնիում, 876 ից մինչև 896 :

Ե. Լէոն Զ. խնամատէր մականուանեալը և Ը. Աղէքսանդր իր որդին, որոնք իրարու հետ կայսր եղան :

Թ. Կոստանդին Է. Պերիկլուսի Լէոն խնամատիրի որդին և Վասիլի թուր 912 ից մինչև 959 կայսր եղաւ, որ արևելեան կայսրութեան ամէնից խնամտուն և ամէնից մեծ կայսրն եղաւ :

Ժ. Ռոմանոս-Ղաքարէն որդի Վախտակայ, Հայաստանի իշխան Կոստանդին Է. հետ միասին 25 տարի Յունաց կայսրութիւնը կառավարեց :

ԺԱ. Ռոմանի Բ. Պերիկլուսի որդին, 959-ից մինչև 963 :

ԺԲ. Յովնանէս Չըմչիկի Երեքսլողիւմ ծնած, 609-ից մինչև 976 :

ԺԳ. Վասիլ Բ. Ռոման Բ. ի որդին 49 տարի կայսրութիւն արաւ, 976-ից

րութիւնները այս կայսրութեան արեւելեան կողմն լինելով թէև ստորին էին նրանից բազմամարդութեան և քաղաքակրթութեան կողմանէ, սակայն վերինն էին նրանից իրանց կրօնի և ազգի միութեամբը, իրանց բանուկ վաճառականութեամբը, իրանց երկրագործութեան ծաղկած վիճակովը և իրանց ճարտարութեամբն ու հարստութեամբը, որոնց վիայ են այն անհաւատալի անհատում քաղաքները, աւանները, բերդերը, գործարանները, վանքերը, եկեղեցիները, հիւրանոցները, կամուրջները և ճանապարհները, որոնք այդչափ քիչ ժամանակ ուայ մէջ շինուել են և անչափ միլիոններ են արժեւ այս երկու փոքրիկ թագաւորութեանց մէջ : Արեւելեան կայսրութեան պատմութիւնը կարգալիս տեսնում ենք, որ արեւելքում ունեցած բերդերը միշտ յարձակումներ են կրում և յափշտակւում են Պարսիկներից կամ Արաբացիներից այս երկու թագաւորութիւնները դեռ չկազմուած : Բայց նրանց գոյանալուցը յետոյ, ապահովւում են նրանք և Արզրումի, Բայբուրդի, Սըվազի, Երզնկայի և ուրիշ Յունաց պատկանած գաւառները վայելում են այս թագաւորութեանց գոյութեան բոլոր ժամանակներում, այսինքն 300 տարիի չափ, Հայոց արեան զնովը մի երկար խաղաղութիւն, մինչդեռ հարաւային գաւառները շատ յաճախ աւերուում և առնուում են Արաբացիներից և Սելճուքեանց տիրապետութիւնն էլ հաստատուում է Իկոնիում, մի քանի օրուայ ճանապարհով հեռու Կոստանդնուպօլսից : Արդ Անույ և Վանայ հայկական թագաւորութեանց գոյութիւնը հարկաւոր էր մէջ թէ միայն հայկական

մինչև 1025. սրանից էր որ Վլադիմիր Ա. Ռուսաստանի մեծ դուքսը ընդունեց 988-ին քրիստոնէութեան կրօնի ճանաչումը :

Ժ.Դ. Կոստանդին Ը. Վասիլ Բ. ի եղբայրը, 1025-ին գահն ելաւ, 1028 ին մեռաւ երեք տարի կայսրութիւն անելուց յետոյ :

Այսպէս Վասիլ առաջնոյն ցեղը 212 տարի Կոստանդնուպօլսում կայսրութիւն վարեց :

Կարող էինք այս տեղ անհամար հայկադուռք աւելացնել, որոնք երեւելի են եղել Յունաց կայսրութեան միջ, իրբու պատրիարք, ատենակալ, զօրավար, նամաստպէս և հայկազնուէիք, որոնք կայսրուէի են եղել, բայց մեր հայեցումածքի նեղ շրջանը չէ ներում մեզ աւելի խօսելու Այս մասին մի ուրիշ գործի մէջ նորունց կ'ստանք :

տարերքի զարդացմանը համար, այլ և արևելեան կայսրու-
թեան ընդհանուր օգտի համար :

Մարդ կոսկիայ և սրտից արիւնը կերթայ Յունաց ա-
րած անողորմ վայրենութեանց պատմութիւնը ըսելիս Հա-
յաստանում, երբ իրանց զաւառը դառաւ : Երբ Անույ տէր
եղան, իրանց առաջին հոգան եղաւ այդ տեղաց դուրս քը-
շելու զօրավարաց մեծ մասը և մեծամեծներին ու նրանց զօր-
քերին էլ ցրուելու : Իրանց սուրը և թոյնը շատ երևելի մար-
դիկներէյ պրծացրին և ժողովուրդը անպաշտպան մնալով,
անհնարին տուրք վճարելու հարկադրուեցաւ : Անի, Մուշ,
Բաղէշ, Զարիշատ, Պայազիզ և Երազքաւորս քաղաքները, նոյն-
պէս և Վան, Մանազկերտ, Խլատ, Արծկէ, Արծն, Ոստան և Բէրկ-
րի քաղաքներն ուրիշների հետ միասին Յունաց զօրքերով
լքուեցան : Տուղրիլ Սելճուքեանց Սուլթանն, որուն նախորդ
Հասանը Տիգրիս գետից անց էր կացել և Միջագետքը վե-
րիվայր էր արել, Հայաստանու վիճակն իմանալով մի յարձա-
կում արաւ : Արծէն¹ բազմամարդ ճոխ և վաճառաշահ քա-
ղաքը առնուեցաւ մի փոքր ժամանակ զիմանալուց յետոյ :
Այս քաղաքի բնակիչքը, որոնք 140,000, 150,000-ի² չափ էին,
սրով կոտորուեցան և գերի աւարուեցան, քաղաքն էլ ամբողջ
մոխիր դառաւ : Արծկէ և Սմբատաբերդ քաղաքները նրանցից
աւելի լաւ բաղդ չունեցան, Գոմնենոս ըստ Հայ պատմագրաց,
Գատաքաղոն ըստ Սէկիւրի, Յունաց զօրավարը Սելճուքեանց
յառաջն առնելու համար 60,000 զօրքով մի բանակ գումա-
րեց : Լիբարիտ Վրաց թագաւորը, Սհարօն Վանայ վերակա-
ցուն և Գրիգոր Մագիստրոսը Վահրամայ որդին, իրանց զօր-
քերով նրա հետ միացան : Քրիստոնէից բանակը պատերազմ
տուաւ Տուղրիլի դէմ Բայբուրտի մօտերը, բայց յաղթուելով
եւ քաշուեցաւ : Մանազկերտ պաշարուելով այն պատերազ-

1 Իզուր տեղն է, որ Կոմս Սէկիւրը իր տիեզերական պատմութեան
մէջ Յ. Գ. եր. 501 Արծէն քաղաքը Արղրումի հետ է չփոխում, այս
երկու քաղաքներն իրարից տարբեր են, առաջնոյն աւերակները Սր-
գրումի արևելեան կողմը կընկնին :

2 Ըստ վիայութեան Արիստակէս Լատիվերտաշւոյն ժամանակակից
պատմագրին :

մից յետոյ Տուղրէլից, զի ցաղնութեամբ գէժ դրաւ : Այս քաղաքը իր հրամանատար վասիլի ձեռքով ազատեցաւ, Հայոց երիտասարդ կտրիճներն և մի ֆռանդ, որ քիմիական հրանարքներով պաշարման մեքենայները կրակի տուաւ, հարկադրեց թշնամոյն ետ քաշուել : Ալփասլան Տուղրէլի մեռնելուց յետոյ դահը բարձրանալով՝ յառաջ քշեց իր աշխարհակալութիւնը դէպի Յունաց կայսրութեան մէջ : Անին պաշարեց 1064 թուին և առաւ, այս ժամանակուայ Յոյները, անգութ ակօրներու վրայ և սողուն զօրաւորաց առջև, Անիից դուրս եկան, և այն փառահեղ քաղաքը որս դառաւ այն վայրենիներուն : Կոտորածն այն աստիճան ահաւելի էր, որ ըստ վկայութեան ժամանակակից պատմագրաց, Արփայ չայի ալիքները արիւնով ներկուեցան : Հաղարաւոր կտրիճ աղամարդեր և կոյս աղջիկներ գերի տարուեցան աշխարհակալներու կանանոցին տարերք դառնալու : Քաղաքն աւարի առնուեցաւ և կրակի տուեցաւ և գեղեցիկ շէնքերու մեծ մասը Աստուածային պաշտաման և հասարակաց համար նուիրուած հոյակապ շինուածքներովը կործանուեցան : Անի քաղաքը, այդ զէպքից հետէ դատարկուելով, 300 տարիի չափ խաղալիք դառաւ այլեայլ կուսակցութեանց, որոնք հետզհետէ առնում և տալիս էին իրարու, մինչև որ չորեքտասներորդ դարումը մի սաստիկ երկրաշարժ վախճան դրաւ նրա ողորմելի վիճակին :

Միտք ունենալով մի ուրիշ գործքի մէջ, որնոր այս միջոցումս պատրաստում եմ մի ամենաճիշդ և մանրամասնօրէն գրուած Հայաստանի երկրագրութեան և տեղագրութեան մասին տալ, երկար չեմք կենալ մի քանի իրերու վրայ, որոնց վրայ պիտի խօսիմ, այլ շտապով կանցկենամ այս հինգերորդ շրջանի վերջին հասնելու :

Ալփասլան էլ մի ծանրակշիռ արդելք չդրնելով Հայաստանում Յունաց կողմանէ, որոնք յայտնի կամենում էին, ինչպէս երեւում է, ոչնչացնել որչափ որ կարելի է հայկական աղպայնութիւնը, իր աշխարհակալութիւնն անելը յառաջ քշեց. Կարս, Էրզրում, Բայբուրդ, Սըվաշ և Կեսարիա նրա տիրապետութիւնն ընդունեցին : Ռումանոս Դիողինէս իր վերջին ջանքն արաւ դռնէ մի քանի քաղաքներ փոքր Հայաս-

տանից պահպանելուն, բայց յաղթուելով Ալփասլանից, դերի ընկաւ. դեռ մետասաներորդ դարը չվերջացած՝ ամբողջ Հայաստանը Յուսուֆ Զնուքից դնաց, որոնք պատժուեցան իրանց յափշտակողութեան փոխարէն :

Իսկ տարաբաղդ Գագիկը, որ Հայաստանի գահը կորցրել էր, երկար ժամանակ Կապադովկիում թափառեց առանց մի ծանրակշիռ բան կարող լինելու անել, որ իր ազատութիւնը կամ մեր տէրութիւնը ձեռք ձգի : Մի սոսկալի սպանում վերջ գրաւ իր տխուր կենացը, երեք թշուառական Յոյն Քալիստրոս զղկումը որդայթ լարելով, նրան 1039-ին վատորէն սպանեցին : Յովհաննէս և Գաւիթ իր երկու որդիքը փոքր յետոյ մեռան, առաջինը անճանօթ հիւանդութեամբ, երկրորդը թոյնով, նոյնպէս և Աշոտ Յովհաննէսի որդին և Բաղրաստուանաց ուղիղ շառաւիղը բոլորովին վերջացաւ :

Պիտի չարունակութիւն.

Քաղղիականից Թաթղմանուած :

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ*

Կ Ա Ն Ո Ն

ՅՑ—ԱՅՍ տեղ խնդրեմ ներուի ինձ մի գիտողութիւն անել այժմեան դատախարակութեան մի թիւր եղանակի վերայ. այն է, առակով և կանոնով անխտիր երեխանց յիշողութիւնը բռնաւորելը, որնոր շատ անգամ չեն հասկանալ և հեռեւաբար իրանց լսելն ու մտանալը մին կէլինի : Ուստի թէ որ կամենում ես, որ քո երեխան մի գործ կատարէ, կամ թէ քո կամեցը համեմատ կատարէ, լաւ է, որ կրկին և կրկին անգամ սկսել տաս նրան մի և նոյն գործը կատարելու, քանի որ կմտանայ կամ կշշկլուի, մինչև որ կատարելագործէ : Այս եղանակով երկու օգուտ կքաղես, մին՝ որ կիմանաս փորձով, թէ կարողութիւն ունի՞ նա կամ ընդունա՞յ է այն պատուիրած գործի գլուխ տանելու, թէ ոչ : Վասն զի երբեմն այնպիսի բաներ են պատուիրում երեխայից, որ իսկոյն առաջին փորձն անելիս, նրանց անկարողութիւնը երևում է ու առհարկի պէտք է որ ուսանին և վարժին մինչև իրանց զլիի գործը կատարեն : Սակայն արի՛ տես, որ շատ հեշտ բան է դատախարակների համար հրամայելը քան թէ դատախարակելը և հրահանգելը : Վրայ երկուսը՝ սոյն այս եղանակից ծագած միւս օգուտը այն է, որ նոյն գործը կրկնել տալով երեխայիցը՝ կվարժին յիշելով և մտածելով կատարելուն այն

* Տես Դ. տարի թիւ Ա.

գործը որնոր արգէն արբուն և խոհուն հաստակաւոր մարդու բանն է և ոչ թէ երեխայից, բայց ընտանեակով նրա հետ ընդ աչքին մի բնական բան կգառնայ : Այսպէս բարե տըւողին գլուխ ծռելը և խօսողի երեսին նայելը հաստատուն սովորութեամբ մի այնպիսի բնածին գործողութիւն կլինի մի բարեկիրթ անձի համար, ինչպէս շունչ առնելն ու տալը մի որ և է մարդու համար, որու համար ոչ կմտածի, ոչ ջանք կանի և ոչ էլ հեռատեսութեան պէտք ունի : Այսպէս քի երեխայի որ և է սխալը ուղղելով, գիտացիր, որ այնուհետև նոյնը չի գործել, և մի առ մի ամէն պահասութիւնները կաւորդես խել նրանից և քո ուզած սովորութեանց հետ վարժեցնել նրան :

89—Տեսել եմ ծնողք, որ այնպիսի կնճռոտ կանոններով պատել պաշտել էին իրանց աղայոցը, որ խեղճերը նրանցից տասներորդ մասն անգամ չէին կարող յիշել, թ ո՞ր թէ կատարել : Սակայն նոյն անհամար և անճոռնի կանոնները չպահելու համար, յանդիմանութիւնով ծեծ էին ուտում : Ուստի հարկաւ այն էր հեռուում, որ երեխայք անուշադիր էին լինում նոյն խրատներին, գիտենալով, որ ինչքան ուշադրութիւն անեն, դարձեալ կարող պիտի չլինին հետեւիլ այն կանոններին և հետեւաբար պիտի պատժուին :

Ուրեմն նայիր, որ քո երեխին տալու կանոններդ որչափ կարելի է, քիչ լինին և հարկը պահանջածին չափ : Վասն զի եթէ մի անգամ նրա ուշքն ու միտքը շատ շատ կանոններով և առակներով լքցնես, այս երկու չարեաց միմն անտարակոյս պիտի հետեւի, այսինքն, կամ ստէպ ստէպ պատիժ պիտի կրէ, որ մի վատ բան է, ըստ որում պատիժ կրելու կընտանեայ, կամ թէ պիտի աչք խփես, եթէ քո կանոններիցը մէ քանին չկատարէ և արհամարէ նրանք, որով և քո աշխատութիւնն էլ արհամարելի կլինի : Քեզ օրէնք հաստատիր, բայց միտ դիր, որ մի անգամ հաստատելուց յետոյ անխտիր ի գործ դրուին : Մանկական հասակը քիչ կանոնի պէտք ունի և քանի որ նա աճում է և նրա հետ մի կանոն էլ գործածական է

դառնում, այն ժամանակ կարող ես և մի ուրիշ կանոն էլ դնել:

Վ Ա Ր Ք

60 — Կրկին անգամ պնդում եմ այս տեղ, որ լաւ հասկանաւ և համոզուիս, որ անհնարին է երեխաներին առականութիւն կրթելը, ըստ որում նրանք իրանց սովորածն իսկոյն կը մոռանան, այլ քանի առիթներ ունենաս, աշխատիր գործ և օրինակ ցոյց տալու նրանց, այն ժամանակ առանց անդադար յիշողութեան դիմելու իրանց սովորածը սովորութեամբ բնականապէս ի գործ կգնեն: Սակայն դարձնալ այս մասին մի քանի զգուշութիւններ կան անելու. նախ՝ անուշ և սիրայորդոր խօսքերով, և չէ թէ իբր մեղապարտ սաստելով, այլ իբրև թէ իրանց մոռացածը միտք բերելու ղիտամբ գործածել տուր նրանց միշտ այն բաները, որոնք կամենում ես նրանց վրայ սովորութիւն դառնան: Երկրորդ՝ շատ ղիտելու բան է նաև, որ շատ բան մէկանց նրանց չտրվեցնես, որպէս զի խառնաշփոթ լքցուելով նրանց մտքումը, բան չը սովորին: Երբ կտեսնես, որ անընդհատ գործադրութեամբ նրանց հետ վարուելը բնական և հեշտ է դառնելայն ժամանակ ուրիշ բան անելու կարող ես փորձ փորձել:

Այսպէս կրկնելով միշտ դաստիարակին ուսուցանելու և դանակը, և սէթէ երեխայից յիշողութեան վրայ վստահանալով, կարելի է այնպիսի օգուտներ յառաջ գան, որ զարմանանք, (եթէ ներելի է զարմանալ շատ սովորութեանց վրայ) թէ ինչո՞ւ համար մինչև այսօր այս եղանակը չի գործ դնուում ամէն տեղ: Հիմայ մի ուրիշ միջոց միտքս է գալի, որնոր պիտի պրի անցկացնեմ: Վերոյիշեալ եղանակով պէտք է ղիտենք, թէ երեխայի կարողութեանը, հանճարին և կազմուածքին ո՞ր բանն աւելի յարմար և պաշտօնա՞ն է, ըստ որում այս բանս կանոնաւոր դաստիարակութեան մէջ մի նշանակելի կէտ է: Անկարելի է մանկանց բնադէպ բնաւորութիւնը ղիտովին այլայլել, այն է, պուարթ ունը խոհական, ծանրազուխը և մազնոտը ծիծաղերես անել, առանց նրանց բնածին հանդամանքը

խանդարելու ։ Աստուած մարդկանց մաքի վրայ իրեն մի այնպիսի դրոշմ է կոխած, որ իրանց կերպարանքի նման թերևս մի փոքր ուղղելը հնարաւոր լինի, սակայն լիովին փոփոխելը և մի հակառակ կերպարանք և ձև դրոշմելը հազիւ հազ կարելի է ։

Ուրեմն մի դայեակ կամ դաստիարակ պարտական է նախ՝ ուշի ու շով զննել տղայոց բնաւորութիւնը և ընդունակութիւնը, փորձառութեամբ դիտէ, թէ ո՞ր կողմը աւելի հակուժ, ո՞ր բանին աւելի յարմարութիւն ունին, ու յետոյ որոշէ, թէ ինչ կերպով կարող է նրանց բնական ձիւքը զարգացնել ։ Պարտաւոր է նա դիտել, թէ արդեօք տղայքը կրթելու համար հարկաւոր են զործածական կանոններ՝ թէ ոչ աւելորդ են ։ Վասն զի շատ անգամ մեր նպատակը պիտի լինի բնականը չխանդարել, այլ նրանից օգուտ քաղել և երեխայիցը մոլութենէ և մոլորութենէ պահպանել, քանի կտեսնենք, որ նրանց համար հակամիտութիւն են ցոյց տալի ։ Նրանց ամէն մէկի բնական հանճարն ու ընդունակութիւնը տարածի չափ նրան դէպի յառաջ մղել, Իսկ ի զուր կլինի քո աշխատանքը, եթէ չափից դուրս այլևայլ բաներով նեղես նրան և ինչ որ նրա վրայ ծեփես, մի աղեղ կերպարանք տալուց զատ իսկոյն երեւան կըլինի բռնութեամբ սորվելը իրաւանշորհք և շինովի վարմունքից ։

Խոստովանումեմ, որ արուեստակութիւնը կեղծ և անբնական ձևեր ու կերպեր ունենալը մանկութեան համար յատուկ և բնածին պակասութիւն չէ. այս թերութիւնը նման է այն փշերուն, որ անմշակ հողերու վրայ բնաւ չեն բուսնիլ, այլ պարտիզպանի անհոգութենից կամ ագիտութենից ծաղկաւէտ արտերի մէջ երևում են ։ Մի փոքր կրթութիւն և դաստիարակութիւն ունեցողի միայն ձեռքիցը կուգայ արուեստակութեամբ կեղծ ու շինովի ձևեր և կերպեր բանեցնել իր բնական թերութիւնները թաղցնելու գովելի նպատակով, թէ և ամենեւին չի յաջողել, ըստ որում որչափ տքնի շնորհալի երեւիլ, այնքան անշնորհք կերպարանք կունենայ ։ Ուստի հարկ է այս պակասութեան վրայ հսկել, վասն զի դաս-

տիրապետութեան հետեւանքն է: սակայն մի այնպիսի դատարարական թենից, որ թերի և ծուռն է և նրան հետեւում են տըղայք կամ իրանց սխալմունքից և կամ դատարարական երանգութեան թենից:

Ով որ երբէք դիտած է, թէ ուստի են ծագում ձիւք և շնորհքը, որ միշտ հաճելի են մարդու, նա տեսած էլ պիտի լինի անշուշտ, որ նոյն գեղեցիկ յատկութիւնը այն ժամանակ միայն բնական է երևում, երբ գործողը կամ հիւսողը իր բնաւորութեանը կից լացն է: Միշտ քաղցր է մեզ մարդասէր, անկեղծ և բարեկիրթ մարդոց հետ խօսակցիլ: Մեծահոգի, իր անձին և գործքին տէր և թերութենից ազատ մարդը միայն, և ոչ թէ ցածահոգի, վատազգի, ամբատաւան և աներես մարդը մեր ամէնուն միտքը յափշտակում է: Ուրեմն այսպիսի մեծանձն մարդու գործքերն են, որ բնական լինելով, հաճոյական են թուում ձեզ, իբրեւ նրա բարի հոգւոյն զուտ նշմարանքն և ներքին յօժարութեանց ճիշդ ծնունդը: Այս է այն գեղեցիկութիւնն ու վսեմութիւնը, որ մի քանի մարդկանց գործքերում փայլում են և անսնոդի աչքն ու սիրտը առնում գրաւում են, երբ որ հասուն փորձառութեամբ իրանց վարքը կուզղեն և սովորութենից կամ բնութենից հաստատուած մանր մունր մարդավարական և յարգելի կերպերու հետ ընտանենալով, կեղծ ու պատիր ձեւեր և կերպեր չեն շինել, այլ բնական անուշութենից և բարեկիրթ բնաւորութենից կը զլսեն իրանցից:

Իսկ միւս կողմանէ արուեստականութիւնը ընտիր և լաւ բաներու հետեւելու անվաստակ և անճարակ մի շահասիրութիւն է, որ միշտ գեղեցիկութենից զուրկ կմնայ, վասն զի երկու կերպով յայտնուում է, որ մարդու մի գործքն ու շարժմունքը իր մտքին հետ համաձայն չէ: Նախ՝ երբ որ մի մարդ մի քանի համար ամէն ճիգն թափում է, որ ի բնէ չունեցած կերպարանքն արտաքուստ ունենայ, այն ժամանակ ինքն իրան արած բռնութեամբ կեղծիքը իսկոյն երևան է դուրս գալի: Այսպէս մարդիկ կեղծում են, երբեմն տրտում, զուարթ կամ բարեսիրտ երևալու համար, թէ և իրօք բնաւ այնպէս

չին : Երկրորդ՝ երբ որ մի մարդ, ոչ թէ չունեցած յօժա-
րութիւնը ցոյց տալու ջանալով, այլ ունեցածը բացատրելու
ջանալով անվայելուչ և անհամ մի վարմունք է ստանում,
այն ժամանակ իր ամէն մի շարժմունքը, խօսքը, գործքն ու
նայուածքը, որ թէև իր եղած ընկերութեան յարգ և քա-
ղաքավարութիւն կամ գոհականութիւն և զուարճութիւն
յայտնելու դիմամբ կանէ, բայց էլի բնական յայտարար կեր-
պեր չին, այլ իր թերութեան և սխալմունքի նշաններ :
Այս պակասութեան մէջ կրննին նրանք, որ այլոց հետեւելու
փախաքելով, ամէն բան կօրինակեն առանց զանազանելու, ո՞րն
է շնորհալին և ի՞նչ բան յարմար կերեայ իրանց յատուկ
բնասութեանցը : Սակայն արուեստակութիւնը ամէն մասամբ
և ամէն մարդու համար փնասակար է, վասն զի բնաւորապէս
չինովի բաներու համար տեսելու ունի նա և արուեստակու-
թենից ուրիշ աւելի գովելի բան չունեցողը բոլորովին դա-
տապարտում է :

Մի պարզ, կոշտ և անպաճոյճ բնաւորութիւն աւելի ընտ-
րելի է, քան թէ արուեստակութեամբ շինովի շնորհքով տձև
երևալը և կեղծ ու օրինակուած կերպերը : Կատարելութե-
նից զուրկ մի մարդ որքան պակասական բան էլ անէ, բոլորո-
վին անշնորհք չլինելով, դարձեալ աչքի չլսվել և պարտաւե-
լուց էլ կաշատի : Սակայն ամենափոքր կեղծադէմ վարմուն-
քը և ամենաթեթև շինծու շարժմունքը լապտերի նման
մեր բոլոր պակասութիւններն երևան կհանեն և ամէնուն ա-
ռաջը խայտառակ կանեն, կամ իբրև անմիտ և կամ իբրև
կեղծաւոր ցոյց տալով մեզ : Այս բանիս համար մի դաստիա-
րակ իր աչքը պէտք է չորս բաց անէ, վասն զի ինչպէս վե-
րէն ասի, այն պակասութիւններն յետոյ կառնուն տղայք, և
անկատար դաստիարակութեան մի վատ հետեանքն է դա : Ըն-
կերութեան մէջ նորեկուկ և ընտիր կերպեր ունինալու փա-
փաքողները միայն այնպիսի կեղծ ու պատիր ձևերու և կեր-
պերու են հետեւում, և թէ որ չեմ սխալուում, շատ անգամ
սրանց պատճառը դանդաղ դաստիարակներու ընթացքիցն է
ծագում, որ անդադար կանտն և օրէնք են դնում տղայոց առ-
ջէր, առանց իր խրատը գործադրութեամբ նրանց մտքումը

ապաւորելու և կրկնակի նոյն դասերն իրանց առջև տղայոց
կրկնել տալու . այնպէս որ ինչ պակասութիւն և կեղծիք, որ
տեսնեն նրանց վրայ ուղղելու կարողանան, մինչև որ հեշտ
և բնական դառնայ նոյն վարքի սկզբունքը :

Թարգմանութիւն

Մատթէոսի Մամուրեան .



ԽՐԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ :

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

одобрено ценсурою. Тифлисъ, 28 Февраля, 1863 г.